

ՄԵՐ ԱՆԿԻՆԷՆ

«ԱՐԱՔԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ, ԹՈՒՐԹԻՈՅ ԴԵՐԸ ԵՒ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԱՊԱԳԱՆ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԷՆ ՆԵՐՍ»

ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Գաղութեւս ներս գիրար հոմշտկող հրապարակային ձեռնարկներու շարքին ուշադրութիւն գրաւող երեկոյթ մըն էր ՀԲԸՄ-ի Ասպետներու կազմակերպած «Երեկոյ մը Դեսպանի մը Հետ» հանդիպումը, որ տեղի ունեցաւ Ուրբաթ, Հոկտեմբեր 5-ին, համաձայն միութեան Վաչէ եւ Թամար Մանուկեան Կեդրոնէն ներս, Փասատիմ:

Հանդիսանալով հանդերձ Ոչ-Քաղաքական շարժում, Ասպետներու միութիւնը, հաւատարիմ տարիներ անգամ մը միջազգային ոլորտներէն ներս քաղաքական հեղինակութեան մը հետ հայ համայնքը դէմ յանդիման բերելու իր գնահատելի անդրադարձին՝ այս անգամ բնակր բարձրացնելը ամերիկահայ քաղաքական ակադեմիայի անձնակազմին մը՝ Էտուարտ Շէրէնեանը, որ պիտի դասախօսէր մեր համայնքը մօտէն տազնապեցնող «Արաքական Գարուն, Թուրքիոյ դեր եւ Հայութեան Ապագան Տարածաշրջանէն Ներս» նիւթին շուրջ:

Էտուարտ Շէրէնեան, Սուրիոյ եւ Իսրայէլի մօտ Մ.Նահանգներու արտակարգ եւ լիազօր Դեսպան եղած էր 1981-էն 1993, ինչ որ առիթ բնծայած էր իրեն մօտէն ծանօթանալու միջին Արեւելքի ընկերային, քաղաքական, պետական եւ տնտեսական պայմաններուն:


Ան եղած էր ԱՄՆ-ի, 1962-էն 1994, ուրբ նախագահներու՝ Յոն Ֆ. Գեներտիէն մինչեւ Ուիլիամ Չ. Կլինթոնի Միջին Արեւելեան Արտաքին Յարաբերութիւններու մէջ գործօն դերակատար եւ արժանացած էր նախագահական մասնաւոր յատուկ բարձր պարգեւատրումներու:

Արդարեւ, մեծ էր եղած էտուարտ Շէրէնեանի փորձառութիւնը միջազգային քաղաքական, դիւանագիտական, ընկերային կեանքի մարզերէ ներս, ի մասնաւորի, Միջին Արեւելք եւ Կովկասեան տարածաշրջանները յուզող տազնապեցնելու կապակցութեամբ:

Ներկայ ժամանակներուն, ամերիկահայ համայնքը, որ խորապէս մտահոգ էր Միջին Արեւելքէն ներս տակաւ յաւերժացող «Արաքական Գարուն» անուան տակ ծանօթ, մէկը միւսին յաջորդող քաղաքական ըմբոստութիւններով, որոնք սկսած էին նաեւ իրենց գրոհներուն ենթակայ դարձնել տեղական հայ ազգաբնակչութիւնը, կ'ուզէր իմանալ անշուշտ անոնց մղում տուող պատճառներուն, ինչպէս նաեւ անոնց վախճանական

Շաբ.ք էջ 18

11 ԱԿԱՆԱԲՈՐ ՊԱՏՄԱՔԱՆՆԵՐ ԵԼՈՅՅ ԿՈՒՆԵՆԱՆ ՍԴՅԿԻ 125-ԱՄԵԱԿԻ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ



Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը հայ կեանքի առաջին քաղաքական կուսակցութիւնն է, որ 125 տարիներէ ի վեր կը ծառայէ հայ ժողովուրդին: 1887ին ժընեւի մէջ հայ համալսարանականներու կողմէ հիմնադրուած Մայր կուսակցութիւնը, իր դրոշմը դրած է պատմական Հայաստանէն մինչեւ աշխարհի չորս ծագերուն պիտուած հայ ժողովուրդի պատմութեան վրայ: Այս տարի, անոր հիմնադրութեան 125 ամեակի տօնակատարութեանը շարքին, գիտաժողով մը տեղի պիտի ունենայ Քալիֆորնիոյ Պրայէնք քաղաքի Woodbury համալսարանին մէջ, Շաբաթ օր, Հոկտեմբեր 27ին, առաւօտեան ժամը 9էն մինչեւ կ.ե. ժամը 5: Գիտաժողովը կազմակերպուած է Հայ Կրթական Բարեփոխական Միութեան (ՀԿԲՄ) եւ Նոր Սերունդ Մշակութային Միութեան (ՆՍՄՄ)

կողմէ ու կը վայելէ հովանաւորութիւնը Richard Hovannisian Endowed Chair in Modern Armenian History at UCLA, the Armenian Research Center at the University of Michigan, Dearborn, Woodbury University համալսարաններուն եւ the National Association for Armenian Studies and Research (NAASR) կազմակերպութեան: Գիտաժողովին ելույթ պիտի ունենան 11 ակադեմիկ պատմաբաններ եւ ակադեմիկներ, որոնք իրենց վերլուծութիւններով ու քննարկումներով ՄԴՀԿի պրիսմակի ընդմէջէն պիտի անդրադառնան անցնող 125 տարիներու հայ ժողովուրդի պատմութեան զանազան երեսներուն:

Ստորեւ կը ներկայացնենք մասնակիցներն ու իրենց քննարկումներուն խորագիրները, ըստ օրուան

Շաբ.ք էջ 18

ԵՐԵՒԱՆԻ ՄԵՋ ԲԱՑՈՒՄԸ ԿԱՏԱՐՈՒԵՑԱՒ ՍՈՒՐԻԱՀԱՅԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ ԿԻԼԻԿԵԱՆ ԴՊՐՈՑԻՆ



Տեսարան մը Կիլիկեան դպրոցի բացման արարողութենէն. Կեդրոնը Արմաշ Սրբազան, կողքին քաղաքացի Տարօն Մարգարեան

Հոկտեմբեր 9-ին Երեւանի Նար-Դոսի անուան թիւ 14 հիմնական դպրոցէն ներս բացուած կատարուեցաւ Կիլիկեան վարժարանին՝ Սուրիայէն հայրենիք ժամանած դպրոցահասակ երեխաներու համար: Դպրոցի բացման պաշտօնական արարողութիւնը կատարեցին Դամասկոսի Թեմի առաջնորդ Տէր Արմաշ Եպիսկոպոս Նալ-

պանտեան եւ Երեւանի քաղաքացի Տարօն Մարգարեան:

Դպրոց արձանագրուած են 1-9-րդ դասարանի շուրջ 220 երեխաներ, որոնք իրենց ուսումնական գործընթացը պիտի իրականացնեն սուրիական կրթական ծրագրով, ուսուցումը՝ արաբերէ-

Շաբ.ք էջ 4

ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆԻ ՆԿԱՏՄԱՔ ՄԵՂԱԴՐԱՆՔ ԱՌԱՋԱԴՐՈՒԵՑԱՒ

Հոկտեմբեր 8-ին, Հայաստանի Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը (ԱԱԾ) մեղադրանք առաջադրեց Ազգային Ժողովի «Բարգաւաճ Հայաստան» խմբակցութեան անդամ եւ նախկին արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի նկատմամբ:

Մինչ այդ իր հիմնադրած «Սիվիլիթաս»-ի փողերու լուսաման հարցով չարուցուած քրէական գործով, Օսկանեան կը նկատուէր որպէս վկայ:

ԱԱԾ-ի մօտ մէկ ժամ մնալէ ետք, Օսկանեան ու անոր փաստաբան Տիգրան Աթանէսեան Ծառայութեան շէնքին առջեւ հաւաքուած լրագրողներուն տեղեկացուցին, որ մեղադրանք առաջադրուած է Քրէական օրէնսգրքի 179 եւ 190 յօդուածներով, առանց խափանման միջոցի:

Այս երկու յօդուածները կը նախատեսեն, իւրաքանչիւրը մինչեւ 5 տարի բանտարկութիւն:

«Պարոն Օսկանեանը առաջադրուած մեղադրանքը չի ընդունել եւ իրեն մեղաւոր չի ճանաչել, ցուցմունք տալուց եւ հարցերին պատասխանելուց հրաժարուել է», - յայտարարեց Աթանէսեան՝ աւելցնելով, որ իրենց չեն տեղեկացուցած յաջորդ անգամ ԱԱԾ հրաւիրուելու մասին:

Շաբաթ մը առաջ, Հայաստանի Խորհրդարանը փակ եւ գաղտնի քուէարկութեամբ Օսկանեանը զրկած էր պատգամաւորական անձեռմխելիութենէն:

Միւս կողմէ Վարդան Օսկանեան հարցազրույցի մը ընթացքին յայտարարեց, որ եթէ ԲՀԿ ղեկավար Գագիկ Ծառուկեանը նախագահական յաջորդ ընտրութիւններուն չզդէ իր թեկնածութիւնը, ինք պատրաստ է առաջադրուելու՝ որպէս թեկնածու:

Նախագահական թեկնածութիւնը Վարդան Օսկանեանին կրնայ տալ նոր անձեռմխելիութիւն: Այս ուղղութեամբ նաեւ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը կը ծրագրէ Եւրախորհուրդէն ներս իր ունեցած տեղեկէն մին տալ Օսկանեանին, կանխելու համար անոր ձերբակալութիւնը՝ առաջադրուած մեղադրանքի լոյսին տակ:

Զորքաբաշի, Հոկտեմբեր 10-ին, Միացեալ Նահանգներու դեսպան ճոն Հեֆերն, հանդէս եկաւ յայտարարութեամբ, մտահոգութիւն չաչտնելով Վարդան Օսկանեանի հարցին կապակցութեամբ, մանաւանդ որ այս իրադարձութիւնները տեղի կ'ունենան նախագահական ընտրութիւններէն առաջ: «Այս գործը, կարծես, կը ներկայանայ որպէս Հայաստանի օրէնսդրութեան ընտրովի կիրարկում», - ըսուած էր դեսպան Հեֆերնի յայտարարութեան մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆ

«ՕՍԿԱՆԵԱՆԸ ՔՈՉԱՐԵԱՆԻ ՍՏԵՂԾԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶՈՐ Է»

«Հանրապետություն» կուսակցության անդամ Սուրեն Աբրահամյանը, անդրադառնալով ԲՀԿ պատգամաւոր Վարդան Օսկանեանի շուրջ ստեղծուած իրավիճակին, նշեց, որ դա քաղաքական ենթատեքստ ունի:

«Մարդկային առումով ես նրան կարեկցում եմ: Սակայն Մարտի 1-ի դէպքերի հետ կապուած իր վարքագիծը վերջի շեղումով, թող նա իր կաշուի վրայ զգայ այն, ինչ մենք տաս տարի զգացել ենք: Վարդան Օսկանեանն ուղղակի գոհ է Ռոբերտ Բոչարեանի ստեղծած համակարգի: Վարկածներից մէկն այն է, որ սա հրաշալի ռեժիսորի, հրաշալի սցենարիստի աշխատանք է: Եթէ ռեժիսորին յաջողուի էս տեմպը պահել, ապա Սերժ Սարգսեանը կը դառնայ նախագահ: Հիմա ռէալ թեկնածուն Սերժ Սարգսեանն է», - լրագրողների հետ հանդիպմանն ասաց Սուրեն Աբրահամյանը:

Պարոն Աբրահամյանն անտրամաբանական է համարում Հայաստանի առաջին եւ երկրորդ նախագահների համագործակցությունը: «Եթէ վերամբարձ ուժերի համակարգ չգործի»:

Ինչ վերաբերում է 2013թ. նախագահի ընտրություններին «Հանրապետություն» կուսակցության սեփական թեկնածու առա-



«Հանրապետություն» կուսակցության անդամ Սուրեն Աբրահամյան

ջադրելուն, ապա ըստ Սուրեն Աբրահամյանի իրավիճակը դեռ գնահատել է պէտք: Արդեօք Հանրապետություն կուսակցությունը սեփական թեկնածու չունենալու դէպքում կը սատարի ՀԱԿ-ի թեկնածուին, պարոն Աբրահամյանն ասաց, որ իրենք պէտք է մտածեն. սատարել, թէ՛ ոչ:

«Հանրապետություն կուսակցության համար իշխանությունները երբեք ինքնապատասխան չի եղել: Մենք հիմա զբաղուած ենք մեր հանդիպումներով: 4 տարի ՀԱԿ-ի կազմում լինելով, կուսակցության առանձին գործունէությունը մի փոքր հետ է մղուել: Ակտիւ հանդիպումների շրջան ենք անցկացնում», - տեղեկացրեց Երեւանի նախկին քաղաքապետը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՇԵՆՔԸ ՎԱՃԱՌՈՒԵՑ

Հայաստանի կառավարության որոշում կայացրեց վաճառել կառավարության թիւ 2 մասնաշէնքը, ուր տեղակայուած է Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը:



Աւելի քան 14 հազար քառակուսի մետր տարածքով Հանրապետության հրապարակին վրայ գտնուող անշարժ գույքը եւ արտաքին գործոց նախարարութեան շէնքը յարակից հողամասը գործադիրը որոշեց վաճառել «Տանգո» ընկերությանը՝ 51 միլիոն 271 հազար ԱՄՆ դոլարին համարժէք գումարով:

Պետական գոյքի կառավարման վարչության պետ Արման Սահակեանն ասաց, որ գնորդ ընկերությունը պարտաւորուած է պահպանել պատմամշակութային յուշարձան հանդիսացող շէնքի արտաքին տեսքը:

«Տանգո» ընկերությանը, շրջանառուող տեղեկության համաձայն, պատկանում է արգենտինահայ յայտնի գործարար էդուարդո Էռնեստեանին:

Էռնեստեանին է պատկանում նաեւ «Կոնվերսբանկ»-ը ու «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ընկերությունը, որը շահագործում է Երեւանի «Զուարթնոց» օդանավակայանը: Նա Հայաստանում խոշոր նախագծեր է իրականացնում գիւղատնտեսության ոլորտում:

Կառավարության որոշումից պարզ է դառնում, որ արտգործնախարարութեան շէնքը լինելու է հինգաստղանի հիւրանոց՝ «միջազգային ճանաչում ունեցող հիւրանոցային ցանցի բրենդով»:

«Տանգո» ընկերությունից

«ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆՆ» ՈՒ «ԱԶԱՏ ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԸ» ԿԱՐՈՂ ԵՆ ԱՌԱՆՁՆԱՆԱԼ

«Հրապարակը» թերթը գրում է, որ Բաֆֆի Յովհաննիսեանի «Ժառանգություն» կուսակցությունը, կորցնելով իրեն ժողովրդական համարում բերած պատգամաւորներին՝ Անահիտ Բախշեանին, Ստեփան Սաֆարեանին, Լարիսա Ալաւերդեանին, նոր երջանկություն գտաւ «Ազատ դեմոկրատների» գրկում:



Բաֆֆի Յովհաննիսեան եւ «Ազատ դեմոկրատների» ղեկավար Քոնոբեյեան

Այս գոյզի համատեղ խորհրդարանական կեանքն առաջին իսկ օրուանից հարթ է: Բաֆֆի Յովհաննիսեանի եւ Քոնոբեյեանի՝ մասնաբաժնի միասին վաչր դնելու պայմանաւորուածությունը, որի իրագործումից յետոյ իբր հնարաւոր կը լինէր նոր ուժեր բերել խորհրդարան, չփրկեց քաղաքական այս անյաջող եւ, որոշ կարծիքները համաձայն, պարտադրուած ալեանսը:

Իրականում, «Երիտասարդ ուժեր ներգրուելը» պատրուակ էր, եւ այս պայմանաւորուածութեամբ Բաֆֆի Յովհաննիսեանը երկու «նապաստակ» էր սպաննելու. ազատելու էր ձեռքերը նախագահական ընտրություններին մասնակցելու համար եւ «Ազատ դեմոկրատների» ղեկավար Քոնոբեյեանին հեռացնելու էր խորհրդարանական խմբակցությունից՝ միանգամայն տարբեր կուսակցությունների միջեւ փխրուն հաւասարակշռություն վերականգնելով:

Բայց Բաֆֆու հաշուարկը սխալ էր: Քոնոբեյեանը, ի տարբերություն «Ժառանգության» առաջ-

նորդի, պրագմատիկ գործիչ է եւ մանդատից հրաժարուելու «կպշուն» մտքեր չի ունենում: Նա ուղղակի չկատարեց խոստումն ու գնաց արտասահման: «Ազատ դեմոկրատները» ժխտում են պայմանաւորուածութեան փաստը՝ պատճառաբանելով, որ ցանկացած որոշում կայացուած է կոլեգիալ քննարկման արդիւնքում, իսկ այս հարցով որեւէ քննարկում չի եղել:

Ամենատարբեր սցենարներ էին շրջում թեմայի շուրջ: Ըստ մէկի, «Ժառանգությունը» խաչատուր Քոնոբեյեանին վտարելու է խմբակցությունից, եթէ նա Բաֆֆու հետ համաձայնութեան չգայ: «Ուստի Քոնոբեյեանը պէտք է վերադառնայ եւ որոշ պարզաբանումներ պէտք է տայ, յետոյ նոր կը խօսենք», - պատասխանեց ԱԺ պատգամաւոր, «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Ռուբէն Յակոբեանը: Նրա պատասխաններից կարելի է ենթադրել, որ ժառանգականներն այնուամենայնիւ «սանկցիաներ» են կիրառելու:

ՀԱԿ-ՈՒՄ ՍՊԱՍՈՒՄ ԵՆ ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՈՐՈՇՄԱՆԸ

Ընդդիմադիր Հայ ազգային կոնգրէսի (ՀԱԿ) խորհրդարանական խմբակցության ղեկավար Լեւոն Զուրաբեանը ասում է, որ Կոնգրէսի համար նախագահի ամենաշահեկան եւ ուժեղ թեկնածուն Լեւոն Տէր-Պետրոսեանն է, ով ունի «ամենամեծ համախմբող ներուժը եւ վայելում է անհերքելի հեղինակություն»:

Պատասխանելով «Ազատություն» ռադիոկայանի այն հարցին, թէ արդեօք ընդդիմութեան միասնական թեկնածուով հանդէս գալու զաղափարը մնո՞ւմ է ուժի մէջ, եւ Կոնգրէսը կարո՞ղ է պաշտպանել այլ քաղաքական ուժի, օրինակ, «Բարեաւաճ Հայաստան» կուսակցության (ԲՀԿ) թեկնածուին, Զուրաբեանը ասաց. - «Ամէն ինչ կախուած է Տէր-Պետրոսեանի որոշումից: Եթէ նա առաջադրուի, իսկ դրա համար որոշակի քաղաքական պայմանների կատարուելն է անհրաժեշտ, ամէն ինչ պարզ է Կոնգրէսի համար. մենք կառուցում ենք Տէր-Պետրոսեանի շուրջ դաշնակցային դաշտ, որով մտնում ենք պայքարի մի նոր փուլ: Եթէ Տէր-Պետրոսեանը չառաջադրուի, դա Կոնգրէսի համար կը ստեղծի մի նոր իրավիճակ, որում Կոնգրէսը պէտք է կողմնորոշուի, թէ ո՞րն է այս ընտրությունների մասնակցություն իր մարտավարությունը»:

«Փաստորէն Տէր-Պետրոսեանը դեռ չի կողմնորոշուել՝ առաջադրուի, թէ՛ ոչ» դիտարկմանը ՀԱԿ խմբակցության ղեկավարը պատասխանեց. - «Հաւատացէ՛ք, որ

Տէր-Պետրոսեանն իր որոշման մասին անմիջապէս կը յայտնի ամբողջ հասարակութեանը»:

Ինչ վերաբերում է ԲՀԿ պատգամաւոր, նախկին արտգործնախարար Վարդան Օսկանեանի յայտարարութիւնը, թէ ԲՀԿ-ն միանշանակօրէն նախագահական ընտրություններին պէտք է մասնակցի սեփական թեկնածուով, եւ եթէ Գաբրիկ Ծառուկեանը չցանկանայ իր թեկնածու թիւնն առաջադրել, ապա ինքը պատրաստ է ստանձնել այդ պատասխանատուութիւնը, Կոնգրէսի խմբակցութեան ղեկավարը սա Օսկանեանի «անձնական տեսակէտը» որակեց: Հարցին, թէ, այնուհանդերձ, նման սցենարի դէպքում Լեւոն Տէր-Պետրոսեանի գլխաւորած ուժը կարո՞ղ է որպէս միասնական թեկնածու սատարել Վարդան Օսկանեանին կամ Գաբրիկ Ծառուկեանին, Զուրաբեանը պատասխանեց. - «Չեմ կարծում, որ անձնական տեսակէտները մեկնաբանելու անհրաժեշտութիւն կայ, առաւել եւս, երբ խօսքը գնում է արտայայտուած ամբիջիայի մասին: Նախագահական ընտրությունների մասնակցութեան մարտավարությունը պէտք է կառուցուած լինի ոչ թէ ցանկութիւնների, այլ շատ կոնկրետ քաղաքական հաշուարկի վրայ: Սա մեր մօտեցումն է նախագահական ընտրություններին մասնակցելու մեր մարտավարութեանը: Մնացած քաղաքական ուժերն ու անձինք ազատ են արտայայտել ցանկացած կարծիք»:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅԵՐԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆ «ԲՈՒՆԻ ՈՒԺՈՎ ՉԵՆ ՏԱՆՈՒՄ»

Հայաստանում Ռուսաստանի դեսպան Վիաչեսլավ Կովալենկոն Հոկտեմբեր 9-ին ասաց, որ «Հայրենակիցներ» ծրագրի շրջանակում հայերին «ոչ ոք բռնի ուժով Ռուսաստան չի տանում», եւ «երկրից մեկնելու խնդրի պատասխանը պէտք է այլ տեղում փնտռել»:



Ռուսաստանի դեսպան Վիաչեսլավ Կովալենկո

Հարցին, թէ ինչու Ռուսաստանը չի ուզում Հայաստանին ընդառաջ գնալ ու փակել «Հայրենակիցներ» ծրագիրը, որը, շատերի պնդմամբ, նպաստում է Հայաստանից բնակիչների արտագաղթին, Ռուսաստանի դեսպան Վիաչեսլավ Կովալենկոն արձագանքեց, որ հայերին «ոչ ոք բռնի ուժով Ռուսաստան չի տանում», եւ «երկրից մեկնելու խնդրի պատասխանը պէտք է այլ տեղում փնտռել»:

«Արդեօ՞ք խնդիրը Միգրացիոն ծառայությունների ներկայացուցչության մէջ է: Արդեօ՞ք ինչ-որ մէկը հային ստիպողաբար Հայաստանից Ռուսաստան է տանում: Եթէ դուք փակէք ներկայացուցչությունը, կարծում էք այդ մարդիկ չե՞ն մեկնի», - լրագրողների հետ հանդիպմանը հարցեր հնչեցրեց Կովալենկոն:

«Ծառայությունն աշխատում է երկրից ապօրինի արտագաղթը կրճատելու նպատակով», - ասաց դեսպանն ու յաւելեց, թէ ինչու ոչ ոք չի բարձրաձայնում, օրինակ, այն հարցը, թէ ինչպէս է աշխատում ԱՄՆ-ի հիւպատոսությունը: Դեսպանը մէջբերեց Միացեալ Նահանգների հիւպատոսի վերջերս արած յայտարարությունը, որ 2007 թուականից մինչեւ հիմա Հայաստանից մշտական բնակություն արտոնագրի՝ գրին քարտի ծրագրով ԱՄՆ է մեկնել 5000-ից ավելի մարդ՝ իրենց ընտանիքներով:

«Միգրացիոն ծրագրի ներկայացուցչության միջոցով 5000-

ից քիչ մարդ է մեկնել Հայաստանից: Ինչի՞ համար է այս աղմուկը: Ինչի՞ մասին է խօսքը: Ի՞նչ կապ ունի ներկայացուցչությունը», - ասաց դեսպանը:

Ժողովրդագիր Ռուբեն Եգանեանի խօսքով, Հայաստանից մեկնողների շատ փոքր մասն է, որ դիմում է միգրացիոն ծրագրերի օգնությունը: Երկու մարդահամարների միջեւ ընկած ժամանակաշրջանում Հայաստանից մօտ 30.000 մարդ է մեկնել:

«Որեւիցէ խնդիր, հարց այդ ծրագրի փակումը չի լուծի: Այդ մարդիկ մեկնում են, որովհետեւ չեն կարողանում այս երկրում նորմալ գոյատեւել», - «Ազատություն» ռադիոկայանի հետ զրույցում նշեց Եգանեանը:

Յիշեցնենք, որ վարչապետ Տիգրան Սարգսեանի իր ելույթում օրեր առաջ յայտարարել էր, որ Ռուսաստանի միգրացիոն ծառայություն կողմից իրականացուող պետական ծրագիրը այն ձեւով եւ այն ֆորմատով, որ իրականացում է այլ հանրապետություններում, մեզ համար ընդունելի չէ եւ մտահոգում է ՀՀ կառավարությունը:

«ՆԵՐԿՈՒԱԾ» ԱԹԱԹՈՒՐՔԸ ԱԴՐԲԵԶԱՆՑԻՆԵՐԻ՞ ՉԵՌՔԻ ԳՈՐԾՆ Է

Հունգարիայի հայ համայնքում հերքել են թուրքական լրատուամիջոցների այն մեղադրանքները, թէ հայերը Բուդապեշտում Աթաթուրքի արձանի պղծմանը մասնակցություն ունեն:



Աթաթուրքի ներկյով ծածկուած յուշարձանը Բուդապեշտի մէջ

«Ոչ մի տուեալ չկայ կատարուածին հայերի մասնակցութեան մասին: Հայերի մասնակցութեամբ ցանկացած միջադէպի մասին իրաւապահներն անյապաղ տեղեկացնում են համայնքի ղեկավարութեանը: Տուեալ դէպքում կատարուածի հետ հայերի մասնակցութեան վերաբերեալ ոչ մի տեղեկություն չկայ», - NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում ասաց Հունգարիայի հայկական ազգային ինքնավարութիւն կազմակերպութեան փոխնախագահ Նիկողայոս Յակոբեանը:

կանգնեցուել էր Սեպտեմբերի 29-ին: Անցած գիշեր անյայտ անձինք կոտրել են յուշարձանը եւ ներկ լցրել վրան:

Նա չի շեղեց, որ հայ համայնքն իսկապէս դէմ էր հանդէս գալիս յուշարձանի տեղադրմանը: «Սակայն նոյն յաջողութեամբ կարելի է խօսել նաեւ յոյների մասնակցութեան մասին, նրանք եւս վրդովուած էին, ու նաեւ քրդերը», - նշեց Յակոբեանը: Աթաթուրքի յուշարձանը Բուդապեշտում

Ուշագրաւ է, որ միջադէպը համընկել է Բուդապեշտում ադրբեջանահունգարական գործարար համաժողովի անցկացման հետ: Հաշուի առնելով մեթոդները, որոնց ադրբեջանական կողմը յաճախ դիմում է, միանգամայն հնարաւոր է, որ կատարուածը լինի հայերին «սեւացնելու» ադրբեջանական հերթական սադրանքը:

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ. «ԻՎԱՆԻՇՎԻԼԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ ՇԱՏ ԿԱՐԵՒՈՐ ԵՆՔ ՀԱՄԱՐՈՒՄ»

Բիճինա Իվանիշվիլիի պարզաբանումը մեծ կարեւորութիւն ունի Վրաստանի հայ համայնքի համար: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում նշել է համայնքի ներկայացուցիչ Ալեքսանտր Օհանեանը: Նրա խօսքով, կարեւոր է նման պարզաբանման փաստը: «Իհարկէ, մենք դեռ չգիտենք՝ եղել է դա գիտակցութեամբ արտայայտութիւն, որը յետոյ մեղմացուել է, թէ՞ հենց սկզբից այն լրիւ այլ է եղել: Բայց փաստն ակնյայտ է. Իվանիշվիլիի պարզաբանումով է հանդէս եկել, որը տեղադրուել է նրա պաշտօնական կայքում: Նման վարքը մեզ համար նորութիւն է», - յաւելել է Օհանեանը:



Վրաստանի ապագայ վարչապետ Բիճինա Իվանիշվիլի

Խօսելով վրաստանի նոր կառավարութեան կազմի մասին, նա ընդգծել է, որ գլխաւոր խնդիրը հայութեան խնդիրների հանդէպ ուշադրութիւնն է: «Մեզ համար կարեւոր է, որպէսզի խորհրդարանն ու կառավարութիւնն առաւել արդար վերաբերմունք դրսեւորեն հայ համայնքի հանդէպ, համայնքի հետ կապուած հարցերը լուծուեն եւրոպական չափանիշների մակարդակով», - ասել է նա:

Շուտով հայ համայնքը մտադիր է հանդէս գալ յայտարարութեամբ, որտեղ կը յայտնի իր դիրքորոշումը վերջին իրադարձութիւնների հետ կապուած:

Յիշեցնենք, որ Հոկտեմբերի 5-ին «The New Times»-ին տուած հարցազրույցում «Վրացական Երգանք» կոալիցիայի առաջնորդ Բիճինա Իվանիշվիլին, ում գլխաւորած ուժը յաղթել է խորհրդարանական ընտրութիւններում, յայտարարել էր հայրենիք վերադառնալու վրացիների ձգտման մասին, ի հակադրութիւն հայերի, որոնք նախընտրում են մնալ հարեւան վրաստանում: Աւելի ուշ Իվանիշվիլին հանդէս էր եկել պարզաբանմամբ, որտեղ նշել էր, որ ասուածը վերաբերել է հայերի եւ հրեաների՝ աշխարհի քաղաքացի լինելու եւ ուժեղ սիրուք ստեղծելու ունակութեանը, ի հակադրութիւն վրացիների, ովքեր միշտ ձգտում են հայրենիք վերադառնալ:

«ԱԴՐԲԵԶԱՆԸ ՄԵՉ ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՍՈՎ Է ՍՊԱՌՆՈՒՄ»

«Հրադադարի կնքումից արդէն 18 տարի անց Ադրբեջանը մեզ նոր պատերազմով է սպառնում», - «Ռոյթերզ» լրատուական գործակալութեանը տուած հարցազրույցում յայտարարել է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանը:

Նրա խօսքով, հայկական կողմը չի կասկածում, որ «Ադրբեջանի նպատակն է ռազմական ճանապարհով փոխել իրավիճակը, եւ նրանց համար ամենաէական զսպող հանգամանքներից մէկը հենց հանդիսանում է հայկական զինուած ուժերի մարտունակութեան աստիճանը»:

նում է ռազմական ճանապարհով խնդիրը լուծել, ասածս չի նշանակում, որ պէտք չէ բանակցել», - յաւելել է Հայաստանի նախագահը:

Անդրադառնալով հայ սպայ Գուրգէն Մարգարեանին կացնահարած Ռամիլ Սաֆարովին Հունգարիայից Ադրբեջանին արտայանձնելուն ու նրան նախագահ Ալիեւի կողմից ներում շնորհելուն ու մեծարելուն՝ Սերժ Սարգսեանն ասել է. - «Սա եւս մէկ ապացոյց է, որ հաստատեց այն իրողութիւնը, որ Լեռնային Ղարաբաղի բնակչութիւնը չի կարող որեւէ կերպ ապագայ ունենալ Ադրբեջանի կազմում»:

«Երբ ես նկարագրում եմ իրավիճակը, երբ ասում եմ, որ Ադրբեջանը հայատեաց քաղաքականութիւն է վարում, երբ ասում եմ, որ Ադրբեջանի սպառնալիցութիւնները ավելանում են, երբ ասում եմ, որ Ադրբեջանը ցանկա-

«Ես համոզուած եմ նրանում, որ այլեւս ես երբեք չեմ տեսնի Լեռնային Ղարաբաղի առկայութիւնը Ադրբեջանի կազմում: Իսկ դա արդէն մեծ յաջողութիւն է», - հարցազրույցի վերջում յայտարարել է Հայաստանի նախագահը:

ԲԱՑՈՒՄ ԿԻԼԻԿԵԱՆ ԴՊՐՈՑԻ

Շարունակուած էջ 1-էն նով, իսկ ուսուցիչները սուրիահայեր:

«Դպրոցը անհրաժեշտութիւն էր, քանի որ յայտնի չէ, թէ երբ Սուրիոյ մէջ կ'աւարտուի պատերազմական իրավիճակը, իսկ հայաստանեան դպրոցները յաճախող երեխաները չեն կարողանում լիարժէք սովորել, խոչընդոտում են լեզուն, ծրագրերը, դասագրքերը: Կիլիկեան դպրոցը իրենց երեխաներին բերում են այն ծնողները, ովքեր մտադիր են վերադառնալ Սիւրիայ», - լրագրողներուն ըսաւ տնօրէնուհի Նորա Փիլիպոսեանը:

massispost.com daily news updates

ՄԱՍԻՍ ԱՍԵՆԱՎՍՏԱՐԵԼԻ ԱԴՐԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ԳԵՈՐԳ ՊԵՐԿՈՒՊԵՐԿԵԱՆ-. «ՄԻ ՇԱՐՔ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ ՉԽԱՆԳԱՐԵՑԻՆ, ՈՐ ԿԻԼԻԿԵԱՆ ՎԱՐժԱՐԱՆԸ ԲԱՑՈՒԻ»

HayNews.am-ի հարցազրույցը ՄԴ-ՀԿ ատենապետ Գեորգ Պերկուպերկեանի հետ:

-Պարոն Պերկուպերկեան, կը պատմե՞ք Կիլիկեան վարժարան ստեղծելու նախապատմությունը:

-Կիլիկեան վարժարանը 1921 թ.ին Հայկական բացուած առաջին հայկական դպրոցն է եղել, որի 90 ամեակը նշուեց անցած տարի: Բնականաբար, մտահոգուած լինելով Սիրիայում տեղի ունեցող դէպքերով, ՄԴ-ՀԿ-ն չէր կարող անտարբեր մնալ: Քննարկուածներ տեղի ունեցան Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կենտրոնական վարչութեան եւ Հայաստանի վարչութեան միջեւ, որի առանցքային խնդիրը սիրիահայերին աջակցելն էր: Քննարկումներ մասնակցում էին նաեւ Հայկալի շրջանի մեր ընկերները: Ընկերուհի Նորա Փիլիպոսեանը ու Ընկեր Գօգօ Ասմինեանը առաջարկ արեցին դպրոցահասակ երեխաների համար կրթական ծրագիր իրականացնել Հայաստանում: Կենտրոնական վարչութեան անդամներ Սեդրակ Աճեմեանը եւ Վազգէն Գալթիակեանը վարչապետ Տիգրան Սարգսեանի հետ հանդիպման ժամանակ կուսակցութեան անունից առաջարկեցին, որ Կիլիկեան վարժարանին յատկացուի հաստատութիւն, որտեղ կ'անցկացուեն սիրիական կրթական ծրագրով եւ արաբերէն լեզուով դասեր: Ծրագրի նպատակն այն էր, որ Հայաստան տեղափոխուելուց յետոյ երեխաների դասերի ընթացքը չընդհատուի: ՀՀ Սփիւռքի Նախարարութեան, ՄԴ-ՀԿ ԿՎ-ի, ՄԴ-ՀԿ Հայաստանի վարչութեան եւ Սիրիայի հիւսիսային շրջանի ներկայացուցիչների միջեւ տեղի ունեցած հանդիպումներից յետոյ ձեւաւորուեց աշխատանքային խումբ: Հայաստանի վարչութիւնը ներկայացնում էր ես, Կիլիկեան Բարեսիրական Միութիւնը՝ Նորա Փիլիպոսեանը եւ Գօգօ Ասմինեանը, Սփիւռքի նախարարութեան համահայկական ծրագրերի վարչութեան պետ Ատոմ Մխիթարեանը: Մի քանի հարցեր քննարկելուց յետոյ աշխատանքային խումբը հանդիպում ունեցաւ Կրթութեան եւ Գիտութեան Նախարար Արմէն Աշոտեանի հետ, որին ներկայ էին նաեւ քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթութեան վարչութեան պետ Գայանէ Սողոմոնեանը: Քննարկումների փուլից յետոյ սկսուեց գործնական աշխատանքների փուլը: Սփիւռքի Նախարարութիւնում տեղի ունեցաւ ուսուցչական կազմի հաւաքագրումը, իսկ քաղաքապետարանում՝ աշակերտների գրանցումը: Տուեալները համատեղելուց յետոյ սկսեցին աշխատանքները: Աշխատանքները տեղի էին ունենում հետեւեալ կերպ՝ ամենօրեայ հանդիպումներ Հնչակեան կուսակցութիւնում եւ Սփիւռքի Նա-



խարարութիւնում: Մեզ մօտ եղած տուեալները անընդհատ փոխանակում էինք թէ Սփիւռքի Նախարարութեան, թէ Կրթութեան եւ Գիտութեան նախարարութեան եւ թէ քաղաքապետարանի հետ: -Իսկ ի՞նչ խնդիրներ ծագեցին դպրոցի բացման աշխատանքների ընթացքում:

- Ինչպէս միշտ առաջին խնդիրը ֆինանսականն էր, որն իր վրայ վերցրեց ՄԴ-ՀԿ-ն եւ Կիլիկեան Բարեսիրական Միութիւնը: Երկրորդ խնդիրը նիւթատեխնիկականն էր: Բարդ խնդիր էր նաեւ ծրագրի եւ դասագրքերի բացակայութիւնը: Մի քանի փորձերից յետոյ դասագրքերը դժուարութեամբ հասան Երեւան: Դրա համար պարտական ենք Դամասկոսի առաջնորդ Տէր Արմաշ եպիսկոպոս Նալբանդեանին, ով Հայկալից ճամպուրուկներով իր հագուստի եւ անձնական իրերի փոխարէն բերել էր դասագրքերի մի մասը: Քանի որ ամէն մի դասագրքից մի օրինակ էր բերուել, այնուհետեւ սկսուեց գրքերի բազմացման աշխատանքները:

-Ինչպէ՞ս են կազմակերպուելու դպրոցի ադմինիստրատիւ աշխատանքները:

- Մինչ ընթանում էին նախապատրաստական աշխատանքները, Հայկալից մեզ միացան մի քանի ընկերներ, որոնք Կիլիկեան Բարեսիրական Միութիւնն էին ներկայացնում: Ձեւաւորուեց խորհուրդ: Խորհուրդը ղեկավարում էր Յարութիւն Բալբախեանը: Խորհրդի կողմից դպրոցի տնօրէն նշանակուեց Նորա Փիլիպոսեանը: Ուսուցչուհիները հայկազայեր են, ովքեր ներկայացնում են Սիրիայում գործող տարբեր վարժարաններ: Անհրաժեշտութեան դէպքում կը ներգրաւուեն նաեւ տեղացի ուսուցիչներ: ՄԴ-ՀԿ-ի անունից ցանկանում եմ շնորհակալութիւններ յայտնել ՀՀ կառավարութեանը ի դէմս ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսեանի, ՀՀ ԿԳ նախարար Արմէն Աշոտեանին, ՀՀ Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանին, ՀՀ Սփիւռքի նախարարութեան համահայկական ծրագրերի վարչութեանը, Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթութեան վարչութեանը ի դէմս Գայանէ Սողոմոնեանի, որի աջակցութիւնը մեծ դեր խաղաց այս գործում:

ԼԻԲԱՆԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ԶՈՒԳԵՅԱՆԳԻՍ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԷՆ ՆԵՐՍ



Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսը Հնչակեան կուսակցութեան պատուիրակութիւնը կ'ընդունի վեհարանին մէջ

125 տարի՝ հայ ժողովուրդի ծառայութեան մէջ: 125 տարի երկարած գոհաբերութեան եւ նահատակութեան ուղեգիծ՝ յանուն հայ ժողովուրդի գոյատեւման ու պաշտպանութեան, յանուն ազատ անկախ Հայաստանի կերտումին եւ բարգաւաճման:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան հիմնադրութեան 125-ամեակի միջոցառումներու ծիրէն ներս, կուսակցութեան Լիբանանի անդամներն ու համակիրները հաւաքուեցան Անթիլիասի մայրավանքին մէջ, ոգեկոչելու՝ արիւնոտ գոյերթի ուղեգիծին վրայ գոհուած անմահ բոլոր նահատակներուն յիշատակը, նախագահութեամբ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ Արամ Ա. Կաթողիկոսին:

Կիրակի, 7 Հոկտեմբեր 2012-ին, կուսակցութեան ղեկավարութիւնը ծաղկեպսակ գետեղեց Յեղասպանութեան գոհերու յիշատակը յաւերժացնող մատուռին առջեւ: Կուսակցութեան պատուիրակութիւնը կը գլխաւորէին Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական վարչութեան փոխ ատենապետ, Լիբանանի Խորհրդարանի անդամ ընկ. Սեպուհ Գալփաքեան եւ նոյն մարմնի անդամ՝ ընկ. Տօքթ. Եղիկ Ճէրէճեան, Ս.Դ.Հ.Կ Լիբանանի Շրջանի վարիչ Մարմնի ատենապետ ընկ. Ալէքսան Բէշօշկեան, Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչ վարդան Աւագեան, Խորհրդարանի անդամներ՝ Սերժ Թուրսարգիսեան, Ժան Օղասապեան եւ Շանթ Չինչինեան, Պէյրութի քաղաքապետութեան անդամ Արամ Մայրեան, Կուսակցութեան մասնաճիւղերու եւ միութիւններու ղեկավարներ եւ ներկայացուցիչներ:

Պաշտօնական պատուիրակութեան անդամները, կուսակցականներն ու համակիրները ապա մասնակցեցան Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ մատուցուած սուրբ պատարագին, զոր մատուց Հոգեշնորհ Տէր Ստեփանոս վարդապետ Փաշայեան: Յաւարտ սուրբ պատարագի, Հնչակեան կու-

սակցութեան նահատակներու հոգեհանգրտեան արարողութիւնը նախագահեց Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսը:

Ապա վեհափառ Հայրապետը կուսակցութեան պատուիրակութիւնը ընդունեց վեհարանին մէջ: Լիբանանի Շրջանի վարիչ Մարմնի ատենապետ ընկ. Ալէքսան Բէշօշկեան, իր արտասանած խօսքին մէջ պարգաբանեց հոգեհանգստեան արարողութեամբ՝ գոհերու յիշատակը յարգելու գաղափարը:

Հնչակեան կուսակցութեան նահատակներու յիշատակին նուիրուած իր պատգամին մէջ, Արամ Ա. Կաթողիկոս յիշեցուց, որ մեր ժողովուրդի ընդհանրական ու գերագոյն շահերուն, սկզբունքներուն ու իտեալներուն համար իրենց անձը գոհաբերող անձերը՝ նահատակներն են: «Մեր ժողովուրդի կեանքէն ներս գործող որեւէ կառույց, որ կը գործէ մեր հայրենիքի եւ ազգի գերագոյն շահերուն համար, յարգելի է ու գնահատելի: Այսպէս եղաւ Հնչակեան մայր կուսակցութիւնը անցնող 125 տարիներուն ընթացքին: Ան ոչ միայն իր մասնակցութիւնը բերաւ մեր ժողովուրդի հաւաքական պայքարի ճանապարհին, այլ մանաւանդ ցեղասպանութենէն ետք Սփիւռք դարձած մեր կեանքէն ներս, Հնչակեան կուսակցութիւնը եղաւ ներկայութիւն՝ գործող, ծառայող, պայքարող, կազմակերպող ու մասնակցող ներկայութիւն, ի խնդիր մեր ժողովուրդի հաւաքական շահերուն», - ըսաւ վեհափառ Հայրապետը: Անոր համաձայն, Սփիւռքի պատմութեան մէջ, Հնչակեան մայր կուսակցութիւնը իր կարեւոր տեղը եւ դերը ունեցած է: «Ոչ միայն ան եղած է մարտունակ կուսակցութիւն, այլ նաեւ իր մարտունակ ոգիով մասնակցութիւն բերած է մեր հաւաքական կեանքի, զանազան բնագաւառներէն ներս՝ կրթական, մշակութային, բարեսիրական, ազգային, քաղաքական եւ այլ մասնակցութիւնը միշտ եղած է ամբողջական ու յանձնառու», հաստատեց Արամ Ա. Կաթողիկոս:

VISIT YOUR APP STORE AND DOWNLOAD FREE. THE FIRST ARMENIAN NEWS OUTLET APP AVAILABLE FOR ALL YOUR DEVICES.

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065. Dr. Missak Ekmekdjian Chiropractor. Dr. Anahid Ekmekdjian Chiropractor. 2եր առողջութիւնը մեր մտաւիզուութիւնն է

«ՄԵՁ ՄՕՏ ԱՆՊԱՏԺԵԼԻ ՄԱՐԴ ԶԿԱՅ»

Նախագահ Սերժ Սարգսեանի խօսքերից կամ Գախագահը մեզ վստահեցնում է որ Երկրում հաստատուել է օրէնքի իշխանութիւն

ՍՈՒՐԷՆ ԽՈՒԴԱՆԵԱՆ

Վերջերս Հայաստանի բարձր ամբիոններից լսեցինք Սերժ Սարգսեանի յուսադրող վերոյիշեալ յայտարարութիւնը:

Որքան կ'ուզէինք որ այդ յայտարարութիւնը ուղղակի իմաստով արտայայտուած լինէր եւ միաժամանակ իրականութիւն ունենար:

Այսպիսով մենք երկրի հասարակ քաղաքացիներս պէտք է համոզուենք, որ երկրում վերացուել է անպատեխիութեան մթնոլորտը, եւ իշխանութիւն է հաստատել օրէնքը:

Մի այլ խօսքով ամենայն Հայոց երազի զգալի մասը իրականութիւն է դարձել: Այսինքն հաստատուել է ոչ թէ մի խումբ մարդկանց, այլ օրէնքի իշխանութիւն, որտեղ խտրութեամբ չի տարբերակուում աղքատը՝ հարուստից, իշխանամէտը՝ ընդդիմադիրից, պաշտօնեան՝ գործազուրկից, նորաբնակը՝ հնաբնակից, իսկ հայը՝ Հայաստանի քաղաքացի՝ ռուսից, յոյնից, անգամ թուրքից:

Ի հարկէ որպէս նախագահի խօսքի վկայ իշխանական քարոզչամեքենան շրջանառութեան մէջ է դնում «Հարսնաբար» ռեստորանային համալիրի հետ կապուած աղմուկ հանած դէպքերի դատաքննչական գործընթացները:

Պատգամաւոր օլիգարխ Հայրապետեան Ռուբէնի հաստավիզ թիկնապահների ձեռքակալութիւնները, «Նեմեց Ռուբոյի մեղադրական ցուցադրումների շղթան»:

Ընդգծելով վերը նշուած «Աղմուկ հանած» բառակապակցութիւնը, դիտարկենք որ նման դէպքերի սակաւաթիւ են:

Եթէ այս ցաւալի դէպքի զոհը չլինէր հօգր գերատեսչութեան՝ այսինքն Պաշտպանութեան Նախարարութեան սպան, հաւանաբար այսքան հասարակական հնչողութիւն չէր ստանայ եւ օլիգարխիկ համակարգից նման ներհամակարգային, «գոհաբերումներ» չէր պահանջուի:

Ժամանակի պահանջն է՝ ամբարտաւանութիւնը համար անհրաժեշտ են նաեւ գոհաբերումներ: Իսկ շարունակութիւնը լինում է այն որ նոյն խաղը դարձեալ շարունակուում է, իլլելով աւելի շատ զոհեր ժողովրդից, նոր ձեւերով ու դրսեւորումներով: Գուցէ տեղին է որ նախագահ Սարգսեանին յիշեցնել

ժողովրդական խօսքը այս կապակցութեամբ, «Մի ծաղկով գարունն չի դալիս»: «Համակարգային փոփոխութիւն է պէտք»:

Ի հարկէ գարթօնք ապրող եւ բռնապետութեան վախը թօթափող հասարակութեան հակազդեցութիւնը նման դաժան երեւոյթների նկատմամբ իր ուրոյն դերն ու նշանակութիւնն է ունենում: Խօսքիս վկան է բողոքի զանգուածային ցույցերը հայրենի բնութեան անխնայ շահագործումների, արդարադատութեան անարդար դատողութիւնների եւ այլոց դէմ:

Նման ցույցերի ընթացքը եւ պահանջ-կարգախօսների բովանդակութիւնը ըստ էութեան արտայայտում է հասարակութեան ցաւը, որոնց նկատմամբ ներկայիս իշխանութիւնների գերակշռող մասը թշնամական եւ հիւանդագին մօտեցումներ ունեն:

Չեն կարողանում հասկանալ կամ ընդունել որ՝

- Պետականաշինութեան գործին լծուելը, այսինքն իշխանական աթոռին բազմելը ծառայութիւն է եւ ոչ թէ վայելք:

- Այդ աթոռից տրուող ծառայութիւնը պահանջում է քրտնաջան եւ անմնացորդ նուիրումով աշխատանք, առանց սպասելու գնահատականի, քանի որ յուսախաբ եւ հիասթափուած ժողովրդին ժամանակ է պէտք իր արժանաւոր նուիրեալներին գնահատելու, սակայն երբ որ եկաւ այդ պահը գնահատականը տրուելու է ըստ արժանաւորյն, երկար ժամկետով:

- Ասելով եւ կրկնելով այն որ «Աշխարհը մի մեծ դմակ է, եթէ ձեռքումդ է սուր դանակը կտրիր որքան կարող ես»: «Հայրենի Պետական վայ ծառայողը ուղորդուում է այդ դրոյթով որը դառնում է նրա մօտ ծառայողական կարծրատիպ: Յաւալին դա է որ այս կարծրատիպը իշխող է դառնում պետականաշինութեան կարեւորագոյն հանգոյցների ձեւաւորման ժամանակ: Յետին պլան է մղւում կառուցողական եւ արմատական փոփոխութիւններ պահանջող բոլոր նախագծերը: Ժամանակի ընթացքում շերտաւորումները այնքան է խորանում որ կոնսոլիդացիան վերածւում է անտազոնիզմի ու թշնամանքի: Այսինքն երկխօսութեան միջոցները կոշտանում են, այն աստիճանի որ ոչ միայն առաջընթացը ար-

գելակուում է այլ հետեւանքը լինում է աւեր ու արիւն: Իսկ հատուցողը լինում է չարքաշ հասարակ ժողովուրդը:

Արդար մրցակցային դաշտի բացակայութիւնը եւ ամբողջ դաշտի բաժանում մի քանի ընտանիքների միջեւ, խոչընդոտում է ներդրումների ներգրաւմանը եւ անտեսութեան զարգացմանը իր բոլոր մեզ յայտնի ու անյայտ հետեւանքներով:

Յաւով բայց աւելին ասենք, անզէն աչքերով նկատում ենք, ներքին ակտիւ կապիտալի արտահոսք դէպի հարեւան երկրներ, այս մէկը այլեւս մեկնաբանելու կարիք չի գուում:

Ջբօաշըջիկութեան ոլորտը բոլորը գիտեն ինչքան կարեւոր է անտեսութեան զարգացման համար: Ինչ է տիրում այս ոլորտում մեզ մօտ, այս ինչ «հրաշք» է կատարուել հարեւան վրաստանում:

Բարի նախանձից ելնելով կարելի էր հրաշքը առանց հակերտների օգտագործել եւ ասէի իրականութեանը բաց աչքերով են նայում, սակայն խորհելու տեղիք է տալիս այն, որ սա յեղափոխութիւն է, «թէ մակերեսային բարեփոխութիւն», ինչու մն էր այս երկրի գրաւչութեան գաղտնիքը, ինչու է Հայաստանի սակաւապահովուած կամ միջին խաւը իր հանգիստը փնտուում է հարեւան երկրում:

Գլուխ կոտրել պէտք չի,

հասկանալու կամ գտնելու այս հարցերի պատասխանը: Մեծ ցանկութիւն եւ կամքի ուժ ներդրուեց վերից վար, օրինապահ երկիր կառուցելու համար:

Ազատ մրցակցութիւն է տեղի ունենում, թէ քաղաքական եւ թէ տնտեսական դաշտում թողնենք արտաքին օժանդակութիւնների հարցը, խօսենք ներքին պոտենցիալ կարողութիւնների եւ հնարաւորութիւնների մասին:

Մենք մարդկային մտաւոր ուժի պակասից չենք տառապում, եթէ ուղեղների արտահոսքը դադարի, երկրի վաղուայ օրը ապահովագրելու խնդիրը դառնայ ամենօրեայ օրակարգի առաջին խնդիրը, ապա համակարգային փոփոխութիւնները հնարաւոր է իրագործել: Աւելի կատարեալ մոտեցումներով քան հարեւան երկրում ներմուծուածն է: Բանաձեւեր մէկն է, օլիգարխիկ բռնապետական համակարգը պէտք է փոխարինուի ժողովրդավարական արդար համակարգով: Սա է ժողովրդի պահանջը, որը անհնարինների շարքից չէ:

Ընդամենը ասում է արդար դատիր, նոյն աչքով նայիր ինձ ինչպէս իւրայինին ես նայում:

Թող ինձ ազատ շնչեմ ու ապրեմ, կը ստեղծեմ եւ արդիւնքի այն մասը որ կայսրինն է կը տամ կայսրին, իսկ Աստուծոյ բաժնի հետ էլ ես գիտեմ ինչպէս վարուեմ...:

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 for USA

* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.

* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----


City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax :-----








Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909




SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403b
--	---	---

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits



A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աճիրածեղս է

Coverage & Protection should be on the top of your priority list.

Ս. Դ. ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ 125-ԱՄԵԱԿ ՀԱՅԿ ԲԺՇԿԵԱՆ (ԳԱՅ)



ՏՈՒԹ. ԵՂԻԿ ՃԵՐԷՃԵԱՆ

Առաջին հայեացքին կը թուի թէ Հայկ Բժշկեանի մասին ամէն ինչ ըստած է: Անոր մասին լոյս տեսած են առ նուազն երկու պատկառելի գիրքեր, (1) գիտական ուսումնասիրութիւններ (2) եւ բազմաթիւ յօդուածներ:

Սակայն կը պարզուի որ Հայկ Բժշկեան-Գայի (3) մասին ամէն բան ըստած չէ: Նոյնիսկ կան կարեւոր բաներ, որոնց վրայ այս առիթով հարկաւոր է նոր լոյս փռել:

Հ. Բժշկեան ծնած է Թաւրիզ, 1887-ին:

Կը յաճախէ Արամեան դպրոցը: Հայրը՝ Դիմիդրին, կ'ըլլայ շրջանի առաջին Հնչակեան Կուսակցութեան անդամակցողներէն:

1901-ին Բժշկեաններու ընտանիքը կը հաստատուի Թիֆլիս:

Հ. Բժշկեան կը յաճախէ Ներսէսեան վարժարանը: 1903-ին, տակաւին 16 տարեկան պատանի, Հայկ կ'անդամակցի Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան եւ միեւնոյն տարին մաս կը կազմէ Կովկասի փոխարքայ իշխան Գոլիցինի ահաբեկչութիւնը ստանձնած խումբին: (4)

Հ. Բժշկեան կը տեղափոխուի Պաքու ու կ'աշխատի «Նոպէլ» գործարանին մէջ: Կուսակցական քարոզիչի պաշտօնով կը շրջի Պալխանի, Սապունճի եւ Պիպի-Հէյ-պաթ բանուորական թաղամասերը եւ կը կազմակերպէ բանուորական հաւաքներ:

Պալխանիի մէջ կը մասնակցի նաւթարդիւնաբերող բանուորներու արհեստակցական միութեան ստեղծման:

1906 թուականէն Հնչակեան մամուլին մէջ կը սկսին լոյս տեսնել Հայկ Բժշկեան, Հ.Դ.Բժ., Հայկ, Բանուոր Հայկ, Խ.Գ. ստորագրութիւնները կրող անոր յօդուածները՝ ընդհանրապէս նուիրուած Պաքուի բանուորական կեանքին եւ ազգային հրատապ հարցերուն: 1909-ին, Ս.Դ.Հ.Կ Պալխանիի մասնաճիւղի վարչութեան կողմէ ուղղուած շրջաբերականի 5-րդ կէտին մէջ կ'ըսուի. «Որ նշանակում է մեր կողմէ Բանուոր Հայկին որպէս պաշտօնական շրջիկ-գործակալ եւ արտաքին յարաբերութեան ներկայացուցիչ, որի միջոցով եւ պիտի դիմել մեզ կարբին եղած ժամանակ»(5) Հ. Բժշկեան իր այս պաշտօնով քարոզչական-կազմակերպչական աշխատանքներ կը տանի յատկապէս բանուորական խումբերուն մէջ՝ որոնք կը կազմէին կուսակցութեան կազմակերպչական կառուցին կմախքը: Կարճ ժամանակ մը անց, ան այս մասին ութը էջնոց մանրամասն տեղեկագիր մը կը յղէ վարչութեան: Տեղեկագրին առաջին մասը ցուցակ մըն է որ կը ներկայացնէ խումբերուն իրական վիճակը՝ ֆիրմայի (գործարանին) անունը, խումբին անունը, ե՞րբ կազմուած է, քանի՞ ամիս առաջ գումարուած է վերջին ժողովը, փրոփակատիստը ո՞վ էր վերջին անգամ, ներկայիս խումբը գոյութիւն ունի՞, քանի՞ անդամ մնացած է, ի՞նչ պատճառներով քայքայուած է, որո՞նք ցուցմունքներով պատրաստուած է խումբին տեղեկագիրը: Իր Տեղեկագրին վեր-



ջին երեք էջերով, Հ. Բժշկեան կու տայ իր եզրակացութիւնը խումբերու իրավիճակին մասին՝ գրուած իրապաշտ եւ ինքնաքննադատական մօտեցումով(6):

Այս գործունէութեան ընթացքին Հ. Բժշկեան անհասկացողութիւն կ'ունենայ Պալխանիի հնչակեան «գիւտարական մարմին» հետ: Վերջիններս կը ձերբակալեն զինք: Հարցին կը միջամտէ կուսակցութեան Պաքուի շրջանի գիւտարական ընդհանուր պատասխանատու Արծուիկ (Տիգրան Յարութիւնեան), որ իր խօսքին մէջ կ'ըսէ. «որ այդ բոլորը ասեկոսներ ու բամբասանքներ են, որ Բանուոր Հայկին ինքը շատ լաւ է ճանչնում, որ անցեալում, նախքան իր Զանգեզուր գնալը սերտ գործունէութիւն ենք ունեցել եւ այլն, եւ այլն: Իսկ ինչ վերաբերում է նրա արդի գործունէութեան, այդ կատարում է որոշ մարմնի ցուցմունքներով եւ եթէ «գիւտարական մարմինը» ցանկանում է, կարող է նամակով հրաւիրել ընկ. Ս.-ին եւ բացատրութիւններ պահանջել իր գործունէութեան համար: Իսկ այժմ եւ դիտում եմ նրան ձերբակալելը ձեր կողմից անիրաւացի եւ խնդրում եմ թղթերը յանձնելով իրան թոյլ տաք զնայ» (7) «Ընկերական» ձերբակալութենէն 17 ժամ ետք ազատ արձակուելէն կարճ ժամանակ անց, Հ. Բժշկեան բանուորական ժողովի մը ընթացքին կը ձերբակալուի ցարական իշխանութեան կողմէ: Մի մեղադրէք ինձ սիրելի ընկ. Մելքոն- Ձեր արեւով երդում եմ րոպէ անգամ ժամանակ չեմ ունենում ազատ շունչ քաշելու, երեւակայացէք իմ դրութիւնը թէ շտապի կառավարիչ թէ ադիւտանդ հրամանատարին թէ քարտուղար, թէ բանակի գործերուն հսկող, ասա թէ ինչն է պատճառը որ չեմ կարողանում Ձեզ հետ նամակակցել: Մեր բանակի գործերը այժմ շատ լաւ է. ունենք 5 հարիւրակ՝ որոնց հրամանատարներն են.՝ Ա. հարիւրակ՝ Նշան Երեցեան, Դ. հարիւրակ՝ Արամ Գրիգորեան, Ե. հարիւրակ՝ Հայկ Բժշկեան: Մեր շտապը կազմուած է այսպէս.՝ Աղուինիկ Զանփոյատեան՝ հրամանատար, Միքայէլ Սէֆէրեան (Պանդուխտ)՝ օգնական, Հայկ Բժշկեան՝ շտապի կառավարիչ եւ հարկապահ, Արամ Վելիքեան (Հաճի)՝ ծախսարար, Ռուբէն Գրիգորեան՝ հանդերձապահ, 3 գրագիրներ եւ մի շարք մանր ծառայողներ: Հաւանական է

Ազատ արձակուելէն ետք կը տեղափոխուի Թիֆլիս ուր կը հետեւի հաշուապահական դասընթացներու: Կ'աշխատի երկաթափաճառի խանութի մը մէջ: Հոս եւս կը մասնակցի բանուորական շարժումներուն: Իր ջանքերով կը հիմնադրուի «առեւտրա-արդիւնաբերական ծառայողներու Թիֆլիսի միութիւնը»:

1911 Նոյեմբեր դարձեալ կը ձերբակալուի եւ 3 ամիս Մետիսի բանտին մէջ բանտարկուելէ ետք կ'աքսորուի Աստրախան, ուր կը հաստատուի նաեւ իր ընտանիքը: Որպէս հաշուապահ կ'աշխատի հայ առեւտրականի մը մօտ:

Համաշխարհային Ա. Պատերազմի սկիզբին, Աստրախանի հայութիւնը եւս խանդավառ ընդունելութիւն ցոյց կու տայ զէպի

կամաւորագրութիւնը: Այդ շարժումը կը գլխաւորէ Ս.Դ.Հ.Կ.

Աստրախանի «Էդիլ» մասնաճիւղը: Կը կամաւորագրուին 35 երիտասարդներ, որոնք մարզանքներէ եւ բժշկական քննութիւններ անցնելէ ետք, կը պարզուի որ անոնցմէ 11 հոգին միայն ատակ է գիւտարական կեանքի: Այս խումբին խմբապետ կը նշանակուի Հ. Բժշկեան: Խումբին ճակատ մեկնելու առիթով տեղի կ'ունենայ եկեղեցական արարողութիւն, որուն կը հետեւի ողջերթի ժողովրդային հաւաք: Տեղի կ'ունենան ողբերկեր ելոյթներ: Յատկանշական կ'ըլլայ Հ. Բժշկեանի հօր՝ Տիմիդրիի ելոյթը, որ «լի զգացմունքով խօսեց եւ արտայայտեց իր անկեղծութիւնը զէպի իր որդին, որդու սուրբ եւ ասելով, այսօր քո հարսանեաց հանդէսն է, ասա քո պսակի կանաչ-կարմիրը որը իմ ձեռքովս կապեցի իմ սիրելի կտրիճ Հայկս» (8):

Խումբը կը տեղափոխուի Թիֆլիս եւ կը միանայ կամաւորական Զ. գունդին, որ Ազգ. Պիւռոյցի կազմած կամաւորական գունդերէն անկախ, ստեղծուած էր Հնչակեան Կուսակցութեան կողմէ՝ ռուսական բանակի հրամանատարութեան հաւանութեամբ: Զ. գունդը, կը տեղափոխուի Կարս, գինավարժութիւններ եւ համալրում կատարելու համար:

Պահպանուած է Հ. Բժշկեան Կարսէն գրած մէկ նամակը Ընկ. Մելքոնին (Մելքոն Ասիլբէկեան-Մոզպետ, Մոզ.), ուր կան փաստական հարուստ տուեալներ թէ՛ նամակագիրին եւ թէ՛ գունդի իրավիճակին մասին: (Ստորեւ տարուած նամակը կը հրատարակուի առաջին անգամ): «Ամենասիրելի ընկեր Մելքոն: Երախտագիտական սրբազան պարտքս եմ համրում խորին շնորհակալութիւն յայտնելու Ձեզ եւ յարգոյ տիկնոջը ուղարկածդ նուէրների համար: Խորին շնորհակալական զգացումներով. (անընթեռնելի բառեր) բառ չեմ գտնում յայտնելու շնորհակալութիւնս: Եթէ կենդանի մնամ չեմ մոռանայ երբեք Ձեզ, քանի որ այս ծանր օրերին չինայեցիք: Վերջապէս կրկին ու կրկին ընդունեցէք իմ խորին ու անկեղծ շնորհակալութիւններս: Մի մեղադրէք ինձ սիրելի ընկ. Մելքոն- Ձեր արեւով երդում եմ րոպէ անգամ ժամանակ չեմ ունենում ազատ շունչ քաշելու, երեւակայացէք իմ դրութիւնը թէ շտապի կառավարիչ թէ ադիւտանդ հրամանատարին թէ քարտուղար, թէ բանակի գործերուն հսկող, ասա թէ ինչն է պատճառը որ չեմ կարողանում Ձեզ հետ նամակակցել: Մեր բանակի գործերը այժմ շատ լաւ է. ունենք 5 հարիւրակ՝ որոնց հրամանատարներն են.՝ Ա. հարիւրակ՝ Նշան Երեցեան, Դ. հարիւրակ՝ Արամ Գրիգորեան, Ե. հարիւրակ՝ Հայկ Բժշկեան: Մեր շտապը կազմուած է այսպէս.՝ Աղուինիկ Զանփոյատեան՝ հրամանատար, Միքայէլ Սէֆէրեան (Պանդուխտ)՝ օգնական, Հայկ Բժշկեան՝ շտապի կառավարիչ եւ հարկապահ, Արամ Վելիքեան (Հաճի)՝ ծախսարար, Ռուբէն Գրիգորեան՝ հանդերձապահ, 3 գրագիրներ եւ մի շարք մանր ծառայողներ: Հաւանական է

որ ամսոյն վերջին գնանք ռազմաբեմ անդառնալիօրէն: Ամէն օր հրացանաձգութեան ենք գնում եւ

Կարսի մթնոլորտը դրոգեցնում հնչակեան ռազմի երգերով: Շատ ուրախալի լաւ մարզուած անցնում եմ քաղաքի փողոցներով «Հեռաւոր Երկիր»ը ընթերցելով. տեսնել է պէտք: Այժմ մեզ մօտ են ընկ. Արծուիկը, Լագոն, ընկ. Ալեքսանը: Եթէ կարելի էր դուք էլ գայիք շատ լաւ կը լինէր. մի քանի օրով միայն: Ինչպէս միշտ, նոյնպէս եւ այժմ, մեր տղերքից մի քանիսի մէջ թեթեւ տարածանութիւններ են լինում երբեմն, միշտ հաշտեցնում ենք եւ հարցը փակուում է: Ազգային Պիւռոյց մեզ չի օգներ դարձեալ, բայց մենք երջանիկ ենք եւ չափից դուրս գոհ, որ առանց ծանրանալու ազգի վրայ, առանց նրա անուկով ծածկուելու, պարզ ճակատով, հնչակեան դրօշը պարզած կատարում ենք մեր պարտքը եւ զարմացնում մարդկանց թէ ինչպէս մենք քաղցած, տկոյր եւ անփող, բանակ կառուցել ենք աս-ռելի ու չափազանց օրինակելի: Մոռացայ ասելու պետական, դու-մայի անդամ Զ. Պապաջանովն էր եկել այստեղ մեզ տեսնելու, զարմացաւ մարդը երբ պարագորահանդէս սարքեցինք, գիւտարական պատիւներ տուեցինք, խօստացաւ ամէն կերպ օգնել. նուիրեց 150 ռուպլի: Ուրիշ նորութիւններ չկան. ձրի թերթեր ստանում ենք:

Շղթայս մօտս է: Ուղարկում եմ պատկերս:...անձամբ էր գրուած: Խոնարհ ողջոյններս տիկնոջը եւ ջերմ համբոյցներ Ձեզ ու գաւակներիդ: Սերգեյը այստեղ էր. գնաց Թիֆլիս: Քո Հայկ»: (9)

Կամաւորական Զ. գունդը կը կուռի էրգրումի դժուարին ճակատին վրայ ու շարք մը յաղթական ճակատամարտերէ ետք, ռուսական բանակին կողքին կը մասնակցի էրգրումի գրաւման մարտերուն: Հ. Բժշկեան, «էրգրումի ձեւատէն» եւ «Դէպի էրգրում» ընդհանուր խորագիրներուն տակ, ռազմաճակատային թարմ լուրերով կ'աշխատակցի Թիֆլիս կուսակցական օրական «Գաղափար»ին:

Հ. Բժշկեան իր գրած յօդուածներուն մէջ կու տայ ռազմաճակատին մասին պատմական վաւերական տուեալներ, հանդէս կը բերէ գրական ճաշակ, հայրենասիրական եւ մարդկասիրական խորը համոզումներ, հայոց պատմութեան մասին գիտելիքներ եւ հաւատք հայ ժողովուրդի ազգային ձգտումներուն հանդէպ: Պատմելով էրգրումի ճակատին վրայ խումբ մը ռուս սպաներու հետ իր ունեցած ընկերական հանդիպումին մասին, Հ. Բժշկեան կը գրէ. «Սկսեցի պատմել տեսածս գերեզմանների մասին, համառօտակի պատմելով նմանապէս հայ ազգի սպասելիքները այս պատերազմից, նրա ջանքերը, զոհողութիւնները եւ տուած նիւթական, ֆիզիքական զոհերը: Բանից երեւաց, որ երիտասարդ սպաները հայ կեանքի վերաբերմամբ եւ մանաւանդ վերջին երկու տարուայ շարժման (կամաւորական.՝ Ե.Ճ.) մասին շատ թիւր հակացողութիւն են ունեցել, որի

«ՔԱՋ ՆԱԶԱՐ» ԵՐԳԻԾԱԹԵՐԹԻ 40-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ



Անցնող շաբաթավերջին Երեւանի մէջ իր մահկանացուն կնքեց հայ հռչակաւոր կոմպոզիտոր եւ երաժշտական բազմաթիւ յօրինումներու հեղինակ Էղուարդ Միրզոյեան: Ան 91 տարեկան էր, երկար տարիներ նախագահն էր Հայաստանի կոմպոզիտորներու Միութեան: Էղուարդ Միրզոյեանի յուղարկաւորութեան արարողութեան նախագահած է Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Բ. Կաթողիկոս: Ներկայ եղած են Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեան եւ պաշտօնական այլ անձնաւորութիւններ: Մեծահամբաւ յօրինողի մարմինն ամփոփուած է Երեւանի կոմիտասի անուան պանթէոնին մէջ:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս»

Շարաքաթերթին
 T: (626) 797-7680 F: (626) 797-6863
 Masis2@earthlink.net

Nor Serount Cultural Association
 Proudly Presents

Love Armenia
 Օրիէ' Հայաստանը

BENEFIT CONCERT

For Armenian Youth Groups dedicated to honoring Armenian Heritage & Culture



Min Jung Park
International Concert Violinist



Yin Yin Huang
International Concert Pianist



Ling Yan
International Concert Cellist

Sunday, October 14, 2012

Noor - Sofia Ballroom
 260 E. Colorado Blvd., Pasadena, CA 91101

4:00-5:00 pm : Social Hour
 5:00-6:30 pm : Concert

Hors d'oeuvres, wine, deserts, coffee, tea will be served.
 90 minutes free parking with validation.



Razmik Mansourian
International Singing & Recording Artist



Carl Matthes
International Concert Pianist

General Admission \$30.00
 Tickets & Reservations: www.itsmyseat.com/Noor



"Քաջ Նապար" հանդեսը եւ հեռուստաժամը
Ներկայացնում է

13-րդ ամեակի ԹԵԼԵԹՈՆ


**Ի ՆՊԱՍՏ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳԻ ԲԻՄՆԱԴՐԱՄԻ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԵՐ ԲԱՇՄԱՆԴԱՄ
ԵՐԵՒԱՆԵՐԻ ԵՐ ՆՐԱՆՑ ՄԱՆԿԱՏՆԵՐԻ
ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԲԱՄԱՐ
(հիմնաձ 1999թ.)**

**Կիրակի, հոկտեմբեր 21, 2012
երեկոեան ժամ 4-12-ը**

**"KACH NAZAR" Magazine & TV Show
Presents 13 ANNIVERSARY
NATIONWIDE TELETHON**

**ON SUNDAY ,
OCTOBER 21, 2012**

**ARMENIAN AMERICAN ORPHANS CHRISTMAS FUND, INC.
FOR DISABLED CHILDREN AND FOR THE
RESTORATION OF CHILDREN'S HOMES**



**AMGA CHANNEL 380
USARMENIA CHANNEL 386
AABC CHANNEL 384
VISION TV CHANNEL 381
From
5:00pm-11:00pm**

www.forourkids99.com



Everyday we build the dreams and future of our children with your generous donations. In their prayers they remember you and give their blessings upon you.
Յեր օգնութեամբ մեր ամէն օր կառուցում ենք, հանգստութիւն և ուրախութիւն պարգեւում հայրենի կարօտեալ երեխաներին: Նրանք իրենց աղօթքներում միշտ յիշում և օրհնում են ձեզ...



P.o. Box 250038 • Glendale, CA 91225 • Tel: 818-246-0125 • 818-239-6880 or 818-606-2070
E-mail: Forourkids99@gmail.com Non-profit Organization A Tax-exempt 501 (c)3 Charity



MAKE A CHOICE... MAKE A PLEDGE...

ՏԱՊԱԼՈՒԵՑ ԵՒՍ ՄԻ ԿԱՂՆԻ ԷԴՈՒԱՐԴ ՄԻՐՁՈՅԵԱՆ ՈՉ ԵՒՍ Է...



ԱՍՏՏՈՒՐ ԿԻՒՋԵԼԵԱՆ

Խոր վշտով իմացալ վաղեմի ընկերոջս՝ կոմպոզիտոր Էդուարդ Միրզոյանի մահուան գոյժը: Միրզոյանի մահով հայ ժողովուրդը ո՛չ միայն կորցրեց իր մեծատաղանդ երաժիշտներից մէկին, այլ նաեւ մարդկային ազնիւ զգացումներով, բարձր իդիալներով, անբեկանելի սկզբունքներով եւ մաքրամաքուր հայրենասիրութեամբ հարուստ՝ եզակի մի հայ մարդու: Էդուարդ Միրզոյանը ամենից առաջ մեծատաղով ՄԱՐԴ էր եւ ոսկետառով ՀԱՅ: Նրա մէջ մարդն ու հայը միաձուլուել էին այնպէս, որ անկարելի էր մէկը միւսից բաժանել: Միրզոյանի համար լաւ հայ լինելու նախապայմանը՝ լաւ մարդ լինելն էր: Նրա հասկացողութեամբ վատ մարդը, լաւ հայ չէր կարող լինել: Կան մարդիկ, որոնք ամբողջ մի կեանք ջերմութիւն, սէր, ժպիտ եւ ուրախութիւն են բաշխում իրենց շրջապատին, օգնութեան ձեռք են երկարում տկարին ու չքաւորին, օժանդակում են բոլոր նրանց՝ ովքեր օգնութեան կարիք ունեն, բարձրացնում են անկեալին, բաժանում են ընկերոջ վիշտն ու մասնակից դառնում՝ նրա ուրախութեան: Ահա այդպիսին էր Էդուարդ Միրզոյանը, որի նկարագրի բնորոշ գծերը եղան անկեղծութիւնը, անմիջականութիւնը, մարդասիրութիւնը, կենսասիրութիւնն ու սրամտութիւնը: Բացի երաժիշտական տաղանդից՝ Միրզոյանն օժտուած էր նաեւ կազմակերպչական ունակութիւններով: Պատահական չէ որ ամբողջ երեսուցի հինգ տարի նրան վստահուեց Հայաստանի կոպոզիտորների Միութեան նախագահի պատասխանատու պաշտօնը. պաշտօն՝ որը նա վարեց բոլորանուէր աշխատանքով ու նուիրութեամբ, որին իբրեւ հետեւանք՝ հայ երաժիշտութիւնը արձանագրեց աննախընթաց վերելք: Միրզոյանի նախագահութեան տարիներին էր որ Ա. Բաբաջանեանի, Ա. Յարութիւնեանի, Ղ. Սարեանի, Ա. Խուրդոյանի եւ այլ կոմպոզիտորների ստեղծագործութիւններով մեծապէս հարստացաւ հայ երաժիշտութիւնը: Էդուարդ Միրզոյանին անձնապէս ճանաչեցի 1963 թվականի Օգոստոսին, երբ Կրթական Նախարարութեան հրահանգով, առաջին անգամ այցե-

լեցի Հայաստան, մասնակցելու, սփիւռ. քահայ այլ կրթական մշակների հետ, Ուսուցիչների կատարելագործման Ինստիտուտի դասընթացներին: Այդ տարիներին պաշտօնավարում էի Կալիֆոռնիա Հայոց Մարդասիրական ձեռնարկում: Երբ սփիւռ. քահայ ուսուցիչներն առաջին անգամ հանդիպեցին Միրզոյանին, վարպետն իր կենսախիղձախտով, անկրկնելի գուարճախօսութեամբ, անմիջական ու առինքնող բնավորութեամբ գրաւեց բոլորի սրտերը եւ արժանացաւ նրանց հիացմունքին: Դեռ 1960 թ.ին ծանօթացել եւ բարեկամական կապեր էի հաստատել Բաբաջանեանի հետ, Կալիֆոռնիայում, նրա Հնդկաստան այցելութեան առիթով: Այդ հանգամանքը պատճառ դարձաւ որ Առևտրի միջոցով բարեկամանամ նաեւ Էդուարդ Միրզոյանի, Ալեքսանդր Յարութիւնեանի, Ադամ Խուրդոյանի եւ Երաժիշտների Միութեան Ֆոնդի նախագահ, Բաբգէն Սոսեանի հետ: Իմ Հայաստան գտնուած օրերին, ապրումներով եւ յուզումներով առ լեփ մեր հանդիպումները՝ յատկապէս Դիլիջանի կոմպոզիտորների ամառանոցում անցկացրած օրերի քաղցր յիշատակը, միշտ կը մնան վառ իմ յիշողութեան մէջ: Մեր առաջին հանդիպումից անցան տարիներ, բայց ժամանակը չկարողացաւ թուլացնել մեր բարեկամութեան կամուրջը: Ընդհակառակը՝ յետագայ տարիներն աւելի եւս ամրապնդեցին այդ կամուրջի սիւները յաճախակի մեր հանդիպումների շնորհիւ: Ամէն անգամ Երեւան այցելելիս, պարտադիր լինում էի վարպետ մօտ: Նա ինձ միշտ էլ ընդունում էր եղբայրական ջերմութեամբ, իրեն յատուկ «չարածհի»՝ բայց սիրալիւր ծախտով եւ միրզոյանական գուարճախօսութեամբ: Ինչպէս նշեցի, Էդուարդ Միրզոյանն օգնութեան ձեռք էր երկարում բոլոր նրանց, ովքեր օգնութեան կարիք ունէին: Նա յատկապէս օժանդակում էր պատանիներին եւ երիտասարդներին, որպէսզի նրանք հնարաւորութիւն ունենան զարգացնելու իրենց տաղանդը: Բնութագրելու համար հանգուցեալի մարդասիրական ոգին՝ գրութիւնս ուզում եմ աւարտել անդրադառնալով հեռաձայնային մի խօսակցութեան, որը տեղի ունեցաւ Միրզոյանի եւ իմ միջեւ:

Մօտ երկու տարի առաջ էր, երբ Միրզոյանը հեռախօսեց ինձ եւ խնդրեց, որպէսզի հայկական բարեսիրական կազմակերպութիւնների եւ իմ ընկերների օժանդակութեամբ կրթաթոշակ ապահովեմ, իր խօսքերով՝ «մի շատ տաղանդաւոր երգչուհու համար»: Բնական է չէի կարող մերժել վարպետին: Միրզոյանի խնդրանքը «հրահանգ»ի համազօր էր ինձ համար: Երիտասարդ երգչուհու անունը Անոյ Յովհաննիսեան էր: Նա աւարտել էր Երեւանի կոմիտասի անուան երաժշտանոցը եւ ընդունուել՝ Glasgow -ի Արքայական երաժշտական Ակադեմիան: Անհրաժեշտ էր ապահովել Անոյի առաջին տարուայ կրթաթոշակը, որը ինքն հազար անգլիական ֆունդ էր: Հ.Բ.Ը. Միութեան Լոնդոնի մասնաճիւղի եւ մի քանի ընկերների օժանդակութեամբ ինձ յաջողութեամբ հարկ եղած գումարը ապահովել: Կարճ ժամանակում Անոյ Յովհաննիսեանը լի ու լի արդարացրեց իր տաղանդի հանդէպ Միրզոյանի ունեցած վստահութիւնը: Նա շահեց մի քանի մրցանակներ, արժանանալով քննադատների բարձր գնահատանքին: Անոյ Յովհաննիսեանը, Էդուարդ Միրզոյանի «շատ տաղանդաւոր երգչուհին», այսօր կանգնած է արդէն համաշխարհային համբաւի շեմին: Տաղանդաշատ գրող եւ սրտակից մի ընկերոջ մահուան առիթով գրել եմ հետեւեալ տողերը, որոնք վերաբերում են նաեւ քեզ, սիրելի Էդիկ: «Մեծու-

թիւնները մեռնում են, բայց չեն մահանում»: Մահանում են նրանք, ովքեր իրենց կեանքում ո՛չ մէկ պտղաբեր ծառ չեն տնկել յետագայ սերնդների իմացական ու հոգեկան աւիշ ապահովելու հաշուին, ո՛չ մի ներդրում չեն արել ի շահ մարդկութեան մտաւոր ու բարոյական բարրօրութեան»:

Էդիկ, իմ թանկագին ընկեր, դու չես մահացել, այլ մեկնել ես մի ուրիշ աշխարհ, որտեղ միայն անմահներն են ապրում: Այդ աշխարհը կոչուում է Յաւերժութիւն, որի քաղաքացիութիւնը դու վաղուց վաստակեցիր այս աշխարհում քո աշխատանքով եւ ստեղծագործութեամբ: Նման տխուր առիթներով միշտ լինում եմ Յաւերժութեան մի այլ քաղաքացու, Յովհաննէս Թումանեանի իմաստուն խօսքերը: Դէպի յաւերժութիւն քեզ բարի ճանապարհ մաղթելու համար հուսկ բանքը տալիս եմ «Ամենայն Հայոց Բանաստեղծին»: «Մենք ամենքս հիւր ենք կեանքում Մեր ծննդեան փուչ օրից, Հերթով գալիս, անց ենք կենում էս անցաւոր աշխարհից: Անց են կենում սէր ու խնդում, Գեղեցկութիւն, գանձ ու գահ, Մահը մերն է, մենք մահինը, Մարդու գործն է միշտ անմահ: Գործն է անմահ, լաւ իմացէք, Որ խօսուում է դարէ դար, Երնէկ նրան, որ իր գործով Կ'ապրի անվերջ, անդադար: Հողը թեթեւ թող գայ վրադ, իմ թանկագին ընկեր: Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

ԿՈՄԻՏԱՍԻ ՀԵՏ

Շարունակուած էջ 14-էն

Մանսուրեանը, «Համայնապատկեր» ամսագրի գլխավոր խմբագիր Սարո Գեղդակեանը, բանաստեղծ-առակարգի ժորա կարասպետեանը, Դոկտոր Միլվա Քարայեանը եւ բազում այլ հիւրեր, ծնողներ, մանկավարժներ, ուսանողներ:

Համերգը նուիրուած էր Կոմիտասին, հայ երաժշտութեան արքային: Ելուցի ունեցան Լարքի ուսանողները դաշնամուրային եւ ջութակի կատարումներով, երգչախմբերը ձիւնագանգակների եւ հարուածային գործիքների համոյթներ, նաեւ 12 սաներից կազմուած ամուսնի խումբը իմ ղեկավարութեամբ, որոնք 20 րոպէ տեւողութեամբ պատշաճ ձեւով ներկայացրին Սեւակի «Անյուելի Զանգակատուն»ից հատուածներ. Յուզիչ էր, երբ նրանք իրենց իսկ շուրթերով արտայայտում էին.

Դու չիմացար,
եւ որտեղի՞ց իմանայիր
Մինչդեռ հիմա, հիմա... նայիր
Քանի՜ աղջիկներ, մանչուկներ
քանի, քանի՜ նորատի, պարման
պատանի,
Աչքները սեւար, դէմքները
սուտակ,
Ձեռքներին սրինգ, շեփոր ու
ջութակ,
Դպրոցից գալիս-դպրոց են
գնում՝
Պայուսակներում ու թեւերի
տակ,
Քո երգ ու տաղի պրակները
տաք...
- Դէ եկ, վարդապե՛տ, եւ դու
հաւատա՛:
- Հաւատա՞ որ այս օտար
սփերում իր լոյսն է սսփռում
«Լարք» հաստատութիւնը, որի հիմնադիրն է մեծ երաժիշտ վաչէ
Պարտումեանը եւ որի վառած ջահը
անմար կը մնայ հայ մշակութի,
մասնաւորաբար Լարքի պատմու-

թեան էջերում:

Հաւատա՞, որ այստեղ կրթուում է մի սերունդ, որին կարող ենք վստահել մեր մշակութային ողջ ժառանգութիւնը, մի սերունդ, որ օժտուած է մշակութով ապրելու եւ յարատեւելու ներքին մղումով, մի սերունդ, որն ունի անվերջ ուսանելու եւ զարգանալու տենչը, հաստատակամութեան ոգին, եղածով չբաւարարուելու, այլ աւելի առաջադիմելու համար, մի սերունդ, որ ունի ազնիւ ու հայեցի նկարագիր որն էլ ողջ կեանքում շող է տալու նրանց կոմիտասեան ոգեղէն դիմանկարին:

Ողջ երեկոյի ընթացքում մեզ հետ էր Կոմիտասը՝ «Ձայների Արքան, իր ստեղծածի նման անսասան ու բարի հայեացքով շոյելով լարքականներին, նրանց որոնք մէկ անգամ եւս հաստատեցին, որ այո՛, կարող են խելագարութեան հասցնել Կոմիտասին, բայց չեն կարող սպանել Կոմիտասը: Կոմիտասը ամէնից ապրողն է բոլոր ապրողների մէջ»:

Կոմիտասը ապրում է ուսանողներից իւրաքանչիւրի մէջ:
Եւ ինչպէս Նայիրի Զարեանն է գրել.
Դու հարազատ ես իմ ճարտար ու տքնաջան ժողովրդին
Դարերի գանձը մեզ բերող կամուրջը կայ քո երգերում
Աղբիւրի պէս կարկաչելով կ'երթաս քո ծովն ապագայ,
Անմահական գարուն ես դու, աշուն չկայ քո երգերում:
Եւ ինչպէս Յովհաննէս Շիրազն է գրել:
Թէ չծնուեր մեծ Կոմիտասն իմաստուն՝
Հայ ժողովուրդն այսքան բարձր չէր լինի,
Թէ չլինէր հայ ժողովուրդն աշխարհում՝
Կոմիտասն էլ այսքան քաղցր չէր լինի:

ՀԱՅԿ ԲԺՇԿԵԱՆ (ԳԱՅ)

Շարունակում էք 7-էն

պատճառով մեծ հետաքրքրություններ լսում էին ինձ երբ սկսեցի պատմել հայերի տառապանքը Տաճկահայաստանում, նրա ապստամբական շարժումները եւ հայկական դատի յառաջացման պատճառներն ու հետեւանքները»։ (10)

1915 Յունիս 22-ին, Շարեան գետակի մօտ մղուած ծանր ճակատամարտին, Ձ. գունդի հրամանատար Գրիգոր Աւշարեան կը նահատակուի: Նոյն ճակատամարտին, Հ. Բժշկեան կը վիրավորուի: Բուժուելէն ետք կը հետեւի հայ կամաւորական գունդերու սպաներուն եւ հրահանգիչներուն յատուկ զինուորական միասնեայ դասընթացներուն եւ կը նշանակուի 6-րդ գունդի հրամանատար եւ կը շարունակէ իր մարտական երթը:

Յուլիանոս Բաղրամբեան համար կամաւորական Գունդերու Գործադիր Կոմիտէին զինք կը պարգևատրէ ոսկեայ թուրով: Ռուսական բանակի հրամանատարութիւնը եւ Հ. Բժշկեանը կը պարգևատրէ Գէորգեան երկու խաչերով եւ Ս. Աննայի չորրորդ աստիճանի շքանշանով:

Երբ երրորդ անգամ վիրավորուելով բուժման համար կը գտնուէր Մոսկուա, կը պայթի Ռուսական Յեղափոխութիւնը: Հիւանդանոցէն դուրս գալէն էտք Հ. հրամանատարութեան առընթեր «Ռազմապարեկային» խումբին պետը կը մեկնի Սամարղանտ, ուր տեղափոխուած էր իր ընտանիքը:

1918-ի սկիզբը, նորահաստատ խորհրդային իշխանութիւնները, շարք մը հրամանագրերով իրաւունք կու տան Միջին Ասիա բնակող հայութեան կամաւորական ջոկատներ կազմել եւ մեկնիլ Հայաստան թրջական բանակներուն դէմ պայքարելու համար (11): Ս.Բ.Հնչակեան Կուսակցութեան կողմէ կամաւորական ջոկատներ կը կազմուին Աշխապատի, Սամրղանտի եւ Դաշկենտի մէջ: Սամրղանտի ջոկատը որ վերջնականապէս կը ձեւաւորուի 1918 Փետրուարին, կը դրուի Հայկ Բժշկեանի հրամանատարութեան տակ: Ջոկատի նպատակն էր հասնիլ

Պաքու Ստեփան Շահումեանի օգնութեան (12): Սակայն, կռիւներու ընդլայնման պատճառով դէպի Պաքու տանող ճամբաները կը փակուին եւ Հ. Բժշկեանի ջոկատը կը մեկնի Օրենպուրկ ուր կը միանայ կանոնաւոր Կարմիր Բանակին: Հ. Բժշկեան իր յետագայ ճակատագիրը կը կապէ Կարմիր Բանակին իսկ Հայաստանի փրկութիւնը՝ խորհրդային Միութեան զօրացման հետ:

Փակագիծ մը անձնական յուշերէս: Պատանի էի. «Հայկ Բժշկեան» պատանեկան միութեան անդամ: Միութեանական աշխատանքի խանդավառ մէկ պահուն, տարեց ընկեր մը մօտեցաւ եւ գորովալից ձայնով մը ըսաւ, -տղաս, գիտե՞ս որ ես Հայկ Բժշկեանը անձնապէս կը ճանչնամ. երբ մենք Պոլսոյ մէջ նշեցինք 20-ներուն տարեդարձը, հոն ներկայ եղաւ ան ու ելոյթ ունեցաւ: Պատանեկան միտքս չըմբռնեց ըսուածին տարողութիւնը:

Ապագային ալ, երբ կը մտաբերէի տարեց ընկերոջ ըսածը, այդ կը վերագրէի երեւակայութեան կամ սխալ յիշողութեան: Բայց ամէն բան շրջուեցաւ երբ կարդացի Աշոտ Պատմագրեանի յուշերը. Ա. Պատմագրեան կ'ըսէ թէ 1921-ին երբ Պաթում կ'երթայ, այդ տեղէն հայերու թաւրիգեցի Արմենակ հարսնեան, Հայկ Բժշկեան եւ Միսաք Վարդարանեան: Ապա նոյն հայերուն կը հանդիպի նաևուն վրայ: Ան կը գրէ. - «Մենք շատ զարմացանք տեսնելով որ առաջին երկուսը դրել էին պարսկական մեծ գլխարկներ եւ մանաւանդ Արմենակը կատարեալ թաւրիգեցի թուրքի էր նմանուած: Մեզ բացատրեցին որ Տաճկաստանում հայերի հանդէպ վատ տրամադրութիւն է տիրում եւ իրենք, առ ի զօրու թիւն, իրենց պարսիկ էին ուղղում ներկայացնել» (13): Ուրեմն... բացառուած չէ որ Հ. Բժշկեան Կ.

Պոլիս գտնուած ըլլայ: Իսկ արդե՞օք ան մասնակցած է 20-ներու ոգեկոչումին: Այդ կարելի էր ստուգել միայն ժամանակաշրջանի հայկական մամուլի՝ յատկապէս Հնչակեան օրկան «Երկիր»ի էջերէն: Դժբախտաբար, նոյնիսկ Հայաստանի Ազգային Գրադարանի «Երկիր»ի հաւաքածոն ամբողջական չէր եւ մեզի հետաքրքրող ամիսներու թիւերը կը պակսէին: Բայց չսպասուած տեղէ մը օգնութեան կը հասնի Պուլկարիոյ շրջանի հնչակեան օրկան «Պալքանեան Մամուլը», որ իր 1919 Յունիս 16-ի թիւով, Քսան Կախաղաններու Տարեդարձը Ս.Բ.Հնչակեան նահատակներուն» յօդուածով (հաւանաբար արտատպուած «Երկիր»էն) կու տայ հանդիսութեան նկարագրութիւնը: Կը պարզուի որ այդ եղած է համազգային բնոյթի եւ Ս.Բ.Հնչակեան բանախօսին կողքին ելոյթ ունեցած են Հ.Ս. Ռամկավար, Հ.Յ.Դաշակեան եւ վերակազմ Հնչ. Կուսակցութիւններու ներկայացուցիչները: Ապա, «զօր. Անդրանիկ օգնականներէն մէկը՝ հրամանատար Հայկ, փափաք յայտնած ըլլալով արտայայտուելու, խօսեցաւ երբ կռիւի դաշտ էն լսեցինք թէ յանուն սուրբ գաղափարին Սթանպուլի մէջ կառափնատ էին բարձրացել 20 հնչակեաններ, մեր թեւերը չկախուեցան այլեւս վար, եւ գէնքը ձիգ ուղղուած մնաց թշնամիին կողքին: Անոնց կախաղանները մեզ խրախուսող ոգիներ եղան մինչեւ վերջը. հրաւիրեց ժողովուրդը ըլլալ միշտ խրոխտ, միշտ մարտական»: Իսկ ո՞վ էր «Անդրանիկի հրամանատարներէն Հայկը», արդե՞օք ան նոյն Հայկ Բժշկեանն է որ ինչպէս թաւրիգէն- Կ. Պոլիս ճամբուն վրայ կիսածապտուած էր՝ կը շարունակէր մնալ կիսածապտուած: Բայց Ա. Պատմագրեան Հ. Բժշկեանի այցը Կ. Պոլիս կը նշէ 1921 թուին, մինչդեռ ծերութեան մէջ գրած իր յուշերուն մէջ Ա. Պատմագրեան սխալած ըլլայ. բացառուած թէ նաեւ որ Հ. Բժշկեան քանի մը անգամ Կ. Պոլիս այցելած ըլլայ: Յամենայն դէպս մեզի ծա-

նօթ տարեց ընկերոջ ըսածին, Ա. Պատմագրեանի յուշերուն եւ «Պալքանեան մամուլի» հարդորումին մէջ ընդհանուր իրականութիւն մը կայ՝. անպայման կայ:

Կարմիր Բանակին միանալէն ետք, Հ. Բժշկեան կը նշանակուի Ստավրոպոլեան ռազմաճակատի հրամանատարի տեղակալ, ապա Սիմպլիբիսի հաւաքական զօրավանակի (հուլիանոս 24-րդ «Երկիր» Դիւրիգիտ») հրամանատար ապա Ա. յեղափոխական հրամանատար: Իր ջանքերով կը հիմնադրուի Ա. կարմիր կովկասեան հեծելազօրային վայրի տիւրիզան: Իր զօրքերով հակախորհրդային ուժերուն դէմ կը կռուի Ուքրանիոյ, Լեհաստանի, Չեխոսլաւաքիոյ եւ Գերմանիոյ մէջ: 1920-22 կը հետեւի ռազմական ակադեմիայի դասընթացներուն: 1922-ին կը նշանակուի խորհ. Հայաստանի զինուորական ժողովրդական կոմիտաս (իմա՝ պաշտպանութեան նախարար), միաժամանակ կը նշանակուի սովետական բանակի յատուկ նշանակութեան զօրամասերու հրամանատար: Հ. Բժշկեանի ջանքերով Հայաստանի մէջ կը բացուի հրամանատարական դպրոց ուսման եռամեայ ծրագիրով: (1923-ին յիշեալ նախարարութիւնը կը վերանայ): 1925-29 կը հետեւի Ֆրունզէի անուան ռազմական ակադեմիայի դասընթացներուն, կը պաշտպանէ իր աւարտածառը, կը սկսանայ փրոֆեսորի կոչում եւ կը նշանակուի նոյն ակադեմիայի ռազմական արուեստի պատմութեան դասախօս (ապա ամպլոնի վարիչ): Հ. Բժշկեանի գրչին կը պատկանի ռազմական բնոյթ բազմաթիւ գիրքեր, ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ:

1937-ին որպէս հայրենիքի թշնամի կը գնդակահարուի ստալինեան ընդհանրութեան կողմէ:

1923-ին, մինչ Հ. Բժշկեան կը վարէր պաշտպանութեան նախարարի պաշտօնը, Ս.Բ.Հնչակեան Կուսակցութիւնը կը գտնուէր գաղափարական բնոյթի ներքին դժուարութիւններու մէջ:

Իրողութիւնը այն էր, որ 1922-ի վերջաւորութեան Ս.Բ.Հ.Կ Թիֆլիսի Կեդրոնական Վարչութիւնը դիմում կը կատարէ Կոմիտէին սա կը նկատէ առիթ մը, խորհրդային Միութեան տարածքին եւ անորմէ դուրս Հնչակեան Կուսակցութիւնը լուծելու համայնապար կուսակցութիւններուն մէջ: Խորհրդային Միութեան մէջ ասորմէ փախուստ չկար: Արտասահմանի մէջ սակայն այդ շատ դժուարին փորձ մըն էր: ԱՄՆ-ի մէջ այդ փորձին շատագովները կը պնդէին թէ Հայաստանի խորհրդային Զանրապետութեան ծնունդը պէտք է նկատել Հնչակեան Կուսակցութեան նպատակներուն իրագործումը, ուստի կուսակցութեան գոյութիւնը այլեւս կը դառնայ ինքնանպատակ: Ներքին վէճե-

րու այս մթնոլորտին մէջ, Ս.Բ.Հ.Կ. ԱՄՆ-ի վարիչ Մարմինը (Նիւ Եորք), կ'որոշէ այս հարցին մասին իմանալ Հ. Բժշկեանի կարծիքը: Այս յանձնարարութիւնը կը տրուի Վ. Մարմնի բարտուղար Սեդրակ Շահէնին, որ այս մասին նամակ մը կը յղէ անոր: Պատասխան նամակին մէջ Հ. Բժշկեան լակոնական ոճով կը գրէ. - «Ս. Շահէն: Ստացայ Ձեր նամակը: Յայտնում եմ Ձեզի, ուր որ էք հոն մնացէք եւ շարունակեցէք: Հայկ Բժշկեան: 5-14, 1923, Երեւան» (14): Այդ շրջանին, Հայկ Բժշկեան աւելին չէր կրնար ըսել:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒԹԻՒՆ

1- Ալեքսանդր Դուրանկի, «Գայի Հեմբերով», Երեւան, 1967. Հայկ Հայրապետական, «Լեկեմտար», Երեւան, 1977:

2- Մատուր Աղայեան, «Հայկ Բժշկեան (Գայ)- Ծննդեան 80-ամեակի Առթիւ», «Պատմա-Բանասիրական Հանդէս», 1967, թիւ 1. Վ. Օհանեան, «Գայի Յօդուածները Սովետական Մամուլում», «Լրաբեր», 1970, թիւ 5:

3- Ռուսերէն այբուբեր «Հ» հնչիւնի համար կ'օգտագործուին «Գ» կամ «Խ» գիրքերը: Գայ ծածկանունը որ Հ. Բժշկեանին տրուած է անոր ուսական բանակին միանալէն ետք, խորհրդային «Հայ» բառին ուսերէն տառադարձութիւնն է:

4- «Սովետական Հայաստան», 1962 Փետր. 6. Արամայիս Մնացականեան, «Ռեւոլյուցիայի Հերոսը եւ Զօրախրամանատարը»:

5- Հնչակեան Սոց. Դեմ. Կուս. Պալաթանի մասնաճիւղի ժամանակաւոր վարչութեան թիւ 1 շրջաբերականը. 1909 Յունիս 9: Հայաստանի պետ. արխիւ (կրկնօրինակը հնչ. արխիւ):

6- «Տեղեկագիր Պալաթանուայ Բոլոր Խմբերի», Բանուոր Հայկ: Հայաստանի պետական արխիւ. (կրկնօրինակը հնչ. արխիւ):

7- «Հնչակեան Սոց. Դեմ. Կուսակցութեան Պալաթանուայ մասնաճիւղի ժամանակաւոր վարչութեան Զեկուցում», Բանուոր Հայկ, 1909 Յունիս 30: Հայաստանի պետական արխիւ. (կրկնօրինակը հնչ. արխիւ):

8- «Հայ Կամաւորների մեկնումը. Աստրական 7 Դեկտեմբեր». Հայաստանի պետական արխիւ (կրկնօրինակը հնչ. արխիւ):

10- «Գաղափար», 1916 Մարտ 13. Հ. Բժշկեան, «Դեպի Էրզրում»:

11- Վլատիմիր Պետրոսեան, «Ինդեմագիտական Դրօշին Հաւատարիմ», Երեւան, 1983, էջ 53-61:

12- Վլատիմիր Պետրոսեան, «Հայաստան. 1918 թուական», Երեւան, 2007, էջ 21-23:

13- Աշոտ Պատմագրեան, «Իմ Յուշերից», Պէդրոս, 1977, էջ 80-81:

14- Ս. Շահէնի նամակը Ս.Բ.Հ.Կ. Կեդր. վարչութեան, 24 Հոկտ. 1967, Լոս Անճելոս: Հնչ. արխիւ:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԸՆՈՒՁԱՅՆԵԼ (626) 797-7680

«ՔԱՋ ՆԱԶԱՐ» ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ
Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:30
Կլէմտէյի 380-րդ կայանից

«ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ, ԹՈՒՐԲՈՅ ԴԵՐԸ ԵՒ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԱՊԱԳԱՆ ՄԻՋԻՆ ԱՐԵԻԵԼՔԷՆ ՆԵՐԱ»

Շարունակում է 1-ին

կարելիություններում մասին ԱՄՆ-ի բարձրաստիճանի դիվանագետի մը կողմէ:

Այդ բարձրաստիճանները դադար չունեին: Հագի մէկը վերջանալու, ուրիշ մը ծիլ կ'արձակէր քոյր երկրի մը մէջ, ինչպէս եղաւ Հիւսնի Մուսարաֆի եգիպտոսի պարագային, որուն յաջորդեց Մուամար Քադաֆիի Լիպիան, որմէ ետք վարակը ինկաւ նախագահ Պաշար Ասատի Սուրիայ վրայ, ուր տարի ու կէտէն ի վեր տեղի ունեցող ընդդիմութիւնը-իշխանութիւններ ընդհարումներ կը ծաւալէին արեւելեան մասի, արիւնյալութիւնը եւ արտահոսք: Կը պահանջուէր նախագահի հեռացումը... Արեւմուտքի կողմէ, նախատեսուող Ասատի անկումէն ետք, կարգը կրնար գալ Պարսկաստանին, որուն հիւլէական ծրագրին կը հակադրուէին Արեւմուտքն ու իր դաշնակիցները: Ընդհարումը անխուսափելի կը նկատուէր:

Ձի բացառուի Ատրպէյճան-Արցախ հակամարտութեան «սանեցում» կացութեան վերագրումը: Ձի մոռնանք՝ Ազերի մշտապէս կ'որոնայ հայոց կողմէ, այսպէս կոչուած «գրաւում» հողերուն վերատիրանալու գիւն կրճող ծրագիրը, որ իր լուծումը կրնայ ստանալ ազերի ընտրանքով՝ պատերազմով մը...

Տակաւի կար Հայաստան-Թուրքիա դարաւոր տագնապը, որ իր հարթման կարելիությունները ընթացք կը գտնուի Թուրքիայ կողմէ հայոց դէմ իրագործուած Յեղասպանութեան նախապայմաններով: Արդեօ՞ք

վախկար, որ «Արաբական Գարուն»ը հասնէր մինչեւ Հայաստան աշխարհ, որուն ընկերա-քաղաքական եւ տնտեսական ապականացած մթնոլորտը շատ հեռու էր նկատուէր Միջին Արեւելքի երկրներէն:

Հարցադրում մը ունէր մեր համայնքը.

Արտաքին միջամտութիւններով, միւսական օգնութիւններով եւ կողմնորոշում տրուած դիվանագիտական քիչուսներով ընդդիմութիւնը եւ իշխանութիւններ փոփոխումները յաւերժացնող, տուն ու քաղ եւ քաղաքներ հրոյց մարակ դարձնող գրոհները, ե՞րբ պիտի գտնուին իրենց արարտը: Ամէն ինչ շփոթ էր, տարածաշրջանին ապահովութեան սպառնացող:

Ահա այս մտահոգութիւններէ բխող դրուած, ՀԲԸՄ-ի Ասպետները նախաձեռնած էին «Երեկոյ մը Դեսպանի մը Հետ» հրատարակային հանդիպման մը իրականացումին եւ յաջողուցած զանկա:

ՀԲԸՄ-ի Փաստաւնայի համալիրը հրատարակուած էր, Արուեստներու եւ Գիտութեան Ամերիկեան Ակադեմիայի Խորհուրդի անդամ, ինչպէս նաեւ Նիւ Եորքի Քարնեկի Ընկերակցութեան Հոգաբարձութեան անդամ, ԱՄՆ-ի ակադեմիայի անդամ մը կ'ընդունէր իմանալու «Արաբական Գարունը, Թուրքիայ Դերը եւ Հայութեան Ապագան Տարածաշրջանէն ներս» վերնագրի ներքեւ վերի սիւնակներուն մէջ ամփոփուած հիմնահարցերուն շուրջ:

Անշուշտ, մեր յաջորդ համարներով պիտի արձագանգենք Պր. Դեսպանին հիմնական մտեցումներուն, անոնց կցելով մեր մտորումները:

11 ԱԿԱՆԱԲՈՐ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐ ԵԼՈՅԹ ԿՈՒՆԵՆԱՆ ԱՂԿԻ 125-ԱՄԵԱԿԻ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ

Շարունակում է 1-ին

յայտագրին:

- Դոկտ. Աբէլ քննչ. Մանուկեան- «Ժընեւ եւ Հնչակեան Կուսակցութեան Ստեղծումը»:

- Փրոֆ. Գեորգ Պարտաքճեան- «Գաղափարաբանութիւնը եւ Գրականութիւնը, Մայր Կուսակցութիւնը եւ Անոր Մտաւորական Զատկաները»:

- Փրոֆ. Ժիրայր Լիպարիտեան- «Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Ակունքներուն մօտ, Խնդիրներ եւ Յարակարծիքներ»:

- Փրոֆ. Վահրամ Շէմսասեան- «Բացարձակ Միապետութիւն, Հնչակեան Յեղափոխական Դրուագը 1890ականներու Հայկական Մուսա Լեռի մէջ»:

- Դոկտ. Կարապետ Մոմճեան- «1895էն 1914, Հայկական Քաղաքական-Յեղափոխական Կազմակերպութեանց Յարաբերութիւնները Երիտասարդ Թուրքերու Հետ»:

- Փրոֆ. Հրաչ Զիլինկիրեան- «Կայսրութիւններու Անկումէն Մինչեւ Համաշխարհայնացման Դարը, Հայկական Քաղաքական Գաղափարախօսութեան եւ Ռազմավարութեան Խնդիրներ եւ Հարցադրումներ»:

- Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննէսեան- «Հնչակեան Կուսակցութիւնն ու Հայաստանի Առաջին Հանրապետութիւնը»:

- Տիար Արամ Արքուն- «Հնչակեան Կուսակցութեան Դերը Կրկնակի մէջ, Առաջին Համաշխարհային Պատերազմի Յետնորեակին»:

Հային Պատերազմի Յետնորեակին»:

- Փրոֆ. Արա Տոթուրեան- «Արեւելեան Միացեալ Նահանգներու Հնչակեան Կուսակցութեան Աշխատակողմնական եւ Քաղաքական Գործունէութիւնը, Համաշխարհային Հնչակեան Շարժման Պարունակին մէջ (1890-2000)»:

- Դոկտ. Վարդան Մատթէոսեան- «Հնչակեան Կուսակցութեան Գործունէութիւնը Հարաւային Ամերիկայի Հայկական Համայնքներուն մէջ. Սկզբնական Շրջանի Ուրուագիծ մը»:

- Փրոֆ. Արա Սանճեան- «Խորնչեւ, Հարաբող եւ Հնչակեանները. Փաստագրական Ուղեւորութիւն մը Բանաւոր Պատմութեան Աշխարհի Յառաջիկայի մէջ»:

Նկատի ունենալով հանդիսարարի նստարաններուն սահմանափակ թիւը, կը յանձնարարուի նախօրոք ապահովել ձեր տեղերը, կապուելով info@sdhp125.org հասցէին:

Մուտքը Ազատ է: Սակայն \$100 նուիրատուութեամբ կրնաք ապահովել Գիտաժողովին ձեր մասնակցութիւնն ու ճաշը, նոյն երեկոյին Կլենտէյլի Phoenicia ճաշարանին մէջ կայանալիք «Հանդիպում Ակադեմականներու Հետ» ընթրիքին հրաւիրատուները եւ Նոյեմբեր 18, 2012ին Glendale High School Auditoriumի մէջ կայանալիք 125 Ամեակի Տօնակատարութեան Հանդիսութեան հրաւիրատուները:

Գիտաժողովը պիտի սիւուրուի ընդհանրապէս՝ www.sdhp125.org կայքէջի վրայ:

ՊԻՂԱՏՈՒԻ ՖԵՆՈՄԵՆԸ ԿԱՍ ՕՍԿԱՆԵԱՆԻ ԱՆՁԵՌՆԱԽԵԼԻՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԱԲԱՐԸ

Շարունակում է 2-ին

կան հարցերում մոբիլիզացուել նրա շուրջը: Այլ հարց է՝ դա հիմա ուրախացնող, թէ՛ մտահոգում է նախագահին: Մի դէպքում ընդդիմութեան մոբիլիզացման ռեսուրսի այս ցուցադրութիւնը կարող է ողջ քաղաքական դաշտը մանիպուլացիայի ենթարկելու հնարաւորութիւն ստեղծել՝ «կառավարում եւ ԲՀԿ-ին, կառավարում եւ ողջ ընդդիմութեանը բանաձեւով: Բայց եթէ ՀՀԿ-ԲՀԿ դիմակայութիւնը պատրանքային չէ, ապա սա նախագահական ընտրութիւններին ընդառաջ քաղաքական շատ ուժեղ եւ արագ հասունացող բեւեռ ձեւաւորելու նախադրեալ է ստեղծում: Եւ սա չի կարող չմտահոգել Սերժ Սարգսեանին:

Հանրապետութեան երկրորդ նախագահը երբեք չի յայտարարել խաղից դուրս գալու կամ գտնուելու մասին: Թէ՛ ԲՀԿ-ն եւ թէ՛ յատկապէս Վարդան Օսկանեանը մշտապէս ընկալուել եւ շարունակում են ընկալուել որպէս Քոչարեանի պրոտեկտները: Այն փաստը, որ Ռոբերտ Քոչարեանը թէ՛ ՀՀԿ-ԲՀԿ կողմից ձեւաւորման եւ թէ՛ ներկայումս Վարդան Օսկանեանին «յանձնելու» կապակցութեամբ հանդէս է գալիս յատուկ յայտարարութեամբ, վկայում է աւելի շատ այն մասին, որ նա խաղի մէջ է՝ աւելի շատ գործ կարգինալի կարգավիճակում: Սա մշտապէս առկախուած է թողնում իշխանութեան ամբողջականութեան հարցը, ինչը Սերժ Սարգսեանի համար թերեւս ամենալուրջ խնդիրն է:

Օսկանեանին անձեռնմխելիութիւնից զրկելու որոշման քուէարկութիւնը ցոյց է տալիս Ռոբերտ Քոչարեանին, որ Սերժ Սարգսեանն իսկապէս չի կարողացել ստեղծել իր ու միայն իր իշխանութիւնը: Բայց այս քուէարկութեան արդիւնքները նաեւ ցոյց տուցին, որ ինքը՝ Քոչարեանն էլ նոր ձեւաւորուած խորհրդարանում չունի յենման բաւականաչափ ամուր կէտ: Այսինքն՝ Սերժ Սարգսեանի եւ Ռոբերտ Քոչարեանի միջեւ քաղաքական եղած բաւանսը շարունակում է պահպանուել եւ դա առաջիկայի թիւում Քոչարեանի շահերից:

Դրանով էլ, թերեւս, բացատրուում Օսկանեանի անձեռնմխելիութեան հարցի որոշման հետ կապուած նրա տարածած յայտարարութեան չափազանց թույլ լինելը: Դա աւելի շատ նման էր մի գործչի յայտարարութեան, ով խուսափում է մտնել պայքարի մէջ: Կարելի է սա հասկանալ նաեւ որպէս նախագահական ընտրութիւններին սեփական նախաձեռնութեամբ առաջադրուելու որոշումից հրաժարում, ինչը եւս կարող է լինել իշխանութեան ներսում իր ունեցած ռեսուրսը օբիեկտիւ գնահատելու արդիւնք: Միւս կողմից՝ նման կերպ Քոչարեանը կարող էր նաեւ իր նախկին նախարարին, հաւատարիմ զինակցին պաշտպանելու մասին հոգալ՝ իր հաւակնութիւնները գոհելու պատրաստակամութեամբ դրդելով իշխանութեանը հանգիստ թողնել Օսկանեանին:

Դժուար է ասել՝ Վարդան Օսկանեանը բաւարարուած է այն աջակցութեամբ որ այդ դժուար պահին նրան ցուցաբերեց «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը: Քուէարկութիւնը տապա-

լելու համար ԲՀԿ-ն արեց անհրաժեշտ բոլոր քայլերը. չմասնակցեցին քուէարկութեանը, Աժ-ում տարածեցին Օսկանեանի դիրքերը պաշտպանող տեղեկատուութիւնն ու փաստաթղթերը, սպառնացին հարցը տեղափոխել Եւրոպայի խորհուրդ: Բայց ամենակարեւորը՝ ԲՀԿ-ն յայտարարեց, որ այն, ինչ արւում է Օսկանեանի դէմ, ուղղուած է ԲՀԿ-ի դէմ: Սա Օսկանեանի հետ նրա չափ պատասխանատուութիւնը վերցնելու կոնկրետ քայլ էր:

Բայց Գաղիկ Մառուկեանը Աժ քննարկումներին այդպէս էլ չմասնակցեց: Եւ դա չէր կարող ենթատեքստ չունենալ, որովհետեւ խօսքը ոչ թէ շարքային ինչ-որ կուսակցականի էր վերաբերում, այլ ԲՀԿ-ի փաստացի երկրորդ դէմքին, ԲՀԿ համամասնական ցուցակի երկրորդ համարին, իրենից յետոյ ամենաներկայանալի եւ ամենաազդեցիկ ԲՀԿ-ականի: Մառուկեանն այսպիսով ընդգծեց իր որոշակի օտարութեամբ թիւնը Օսկանեանից: Մի տեսակ այնպիսի տպաւորութիւն էր, թէ այն, ինչ անում է ԲՀԿ-ն Օսկանեանի համար, պարզապէս պարտաւորութեամբ իր զրկումը: Այդպէս է դա, թէ ոչ, ի վերջոյ պարզ կը դառնայ Մառուկեանի եւ ԲՀԿ-ի յետագայ քայլերից: Փաստը, սակայն, մնում է փաստ, որ այն գործիչը, այն անձը, որի օգնութեան կարիքը Օսկանեանն իսկապէս ունէր, այդ պահերին իր կողքին չէր:

ԲՀԿ առաջնորդը թերեւս հասկացաւ, որ իրեն կրկին կանգնեցնում են երկընտրանքի առջեւ. կամ Օսկանեանը, նրա թիկունքում երեւացող ստուերը, կամ Սերժ Սարգսեանը: Մառուկեանն իր համար թերեւս հասկացաւ որ որքան էլ Սերժ Սարգսեանի դիրքերը երեւուն են, այնուամենայնիւ, նա կարողանում է վերահսկել իրավիճակը, ազդել անգամ այն պրոցեսների վրայ, որոնք կարող էին ջրբաժանային, բեկումնային նշանակութիւն ունենալ իշխանութեան ամբողջականութեան պահպանման տեսանկյունից: Նա, իհարկէ կը փորձի շարունակել մաներելու քաղաքականութիւնը, թէեւ հրաշալի հասկանում է, որ օղակն օրըստօրէ սեղմում է իր պարանոցի շուրջը: Դրա համար էլ քայլերը խիստ հետեւողական ու համոզիչ չեն թւում, դրա համար էլ խուսափում է անձամբ այս գործընթացներում ներգրաւուելուց՝ իր վրայ աւելորդ պատասխանատուութիւն չվերցնելու համար:

Միւս կողմից, իհարկէ, Մառուկեանը հասկացաւ, որ հանգամանքերի բերումով այժմ ԲՀԿ-ն հրաշալի հնարաւորութիւն է ստացել դառնալու ընդդիմութեան լիդերը: Բայց ամէն ինչ կախուած է նրանից, թէ Մառուկեանին ինչքանով է դա պէտք: Նա երկու տարբերակ ունի. կամ ձեւաւորել քաղաքական նոր բեւեռ եւ շատ կոնկրետ իշխանափոխութեան խնդիր առաջադրել, կամ էլ յոյսը դնել իշխանութեան ներքին պառակտման, Սերժ Սարգսեանի դիրքերի թուլացման վրայ՝ նրանից աւելի ու աւելի շատ զիջումներ կորզելու համար: ԲՀԿ-ի իշխանասերութեան հանգամանքը, բնոյթը, սակայն, յեղափոխական տարբերակը գրեթէ բացառում է: Սակայն Հայաստանում ոչինչ բացառել, ինչպէս ասում են, հնարաւոր չէ:

«ՀԵՏՔ»

ԻՆՉԻՆ Է ՄՊԱՍՈՒԿ ԲՈՉԱՐԵԱՆԸ

Շարունակում է 2-էն

անցումային այս փուլն աւելի շատ բխում է արտաքին ազդեւորներից, հետեւաբար անցման վրայ ազդեցութիւնը բաւական քիչ է: Այդ պայմաններում, Ռոբերտ Քոչարեանի համար աւելի շահեկան է, որ կառավարման դեկը լինի Սերժ Սարգսեանի ձեռքին, որպէսզի համակարգափոխութեան անխուսափելի ժամանակահատուածում համակարգի բոլոր պահանջները, վախերը, ուսկերը, դժգոհութիւններն ուղղուեն Սերժ Սարգսեանին, իսկ Ռոբերտ Քոչարեանին միայն կարօտեն:

Դա իրիստ սուբիեկտիւ իրողութիւն է, որովհետեւ դժգոհներից, վախեցածներից, մտահոգուածներից ունէ մէկի համար հետաքրքիր չեն իրավիճակի օբիեկտիւ նրբերանգներն ու անխուսափելի շրջադարձերը: Նրանք էլ իրենց մորթու համար են մտածում, ինչպէս օրինակ հենց նույն Ռոբերտ Քոչարեանը:

Պարզապէս, ի տարբերութիւն նրանց, Քոչարեանը շատ աւելի լաւ է պատկերացնում իրավիճակը եւ թերեւս յստակ գիտէ, որ լաւ է, երբ կարօտում են իրեն, բայց առայժմ որեւէ կերպ չարժէ բաւարարել կարօտը՝ որովհետեւ դա վտանգաւոր է պրակտիկորէն անհար լինելու պատճառով: Այսինքն, որեւէ կերպ՝ ուղղակի կամ անուղղակի վերադարձի պարագայում, Ռոբերտ Քոչարեանը խոշոր հաշուով ստիպում է լինելու քայլեր կատարել համակարգը քանդելու ուղղութեամբ, այլապէս այն բացարձակապէս գուրկ է յետագայ գոյատեւման ուսուրբից:

Ռոբերտ Քոչարեանը փորձում է ոչ թէ գալ իշխանութեան, այլ լինել Սերժ Սարգսեանի միակ

կամ ամենագործուն այլընտրանքը մինչեւ 2018 թուականի նախագահի ընտրութիւններ, երբ Սերժ Սարգսեանը պէտք է թողնի նախագահի պաշտօնը: Երկրորդ նախագահը շատ լաւ է պատկերացնում, որ մինչ այդ 5 տարուայ ընթացքում Հայաստանում անցումային փուլի տրամաբանութեան շրջանակում անխուսափելիորէն տեղի են ունենալու հակառակ փոփոխութիւններ, որոնք սակայն շատ ցաւոտ են լինելու ոչ միայն համակարգի համար ընդհանրապէս, այլ նաեւ դրանք իրականացնողի՝ տուեալ դէպքում Սերժ Սարգսեանի համար մասնաւորապէս: Ահա թէ ինչու Քոչարեանը չի ուզի ինքը լինել այն մարդը, ով ստիպուած է իրականացնել ցաւոտ փոփոխութիւնները:

Բայց, այստեղ էլ իհարկէ իրավիճակը ռիսկային է, որովհետեւ ի վերջոյ չլինել փոփոխութիւններ անողը, նշանակում է լինել այդ փոփոխութիւնների «գոհ»: Թէ որն է աւելի վտանգաւոր, աւելի ռիսկային, դժուար է ասել: Բայց, կասկած չկայ իհարկէ, որ փոփոխութիւններ անելը կը լինի «մեղմացուցիչ դէպք յանցանաց» ապագայի համար:

Ռոբերտ Քոչարեանի առումով իրավիճակը բարդ է եւ փակ շրջան է յիշեցնում այն տեսանկիւնից, որ գործընթացն արդէն սկսել է Սերժ Սարգսեանը կամ սկսուել է նրա ժամանակ, հետեւաբար Քոչարեանն այլ ելք չունի, քան սպասել գոնէ մի որոշակի փուլի աւարտի: Այլապէս, մինչ այդ իշխանութեան գալու դէպքում, եթէ յանկարծ գալու փորձը յաջողուի, նրա հանդէպ համակարգային կարօտը կը փոխուի կարկուտի: «ԼՐԱԳԻՐ»

ՄՐՁԻՆՆԵՐԻ ԽԱՅՁՈՑ

Շարունակում է 14-էն

մութիւնից մի դրուագ պատմեմ Արցախին կապող, 18-րդ դարու առաջին կիսամեակում, Արցախի մէլիքներից մէկը գորավիզ կանգնելով թուրք քուէտր Փանախանին, քաղաքական հաշիւներից թելադրուած, նրան հրաւիրեց Արցախ, նա իր տոհմով ու ցեղով եկաւ եւ հաստատուեց Շուշիում, նրանք բազմամալով պատուհաս եւ փորձանք դարձան Արցախացիների համար մինչեւ Արցախի հերոսական անկախացումը նրանց հեռացնել տուեց :

-Ոչ թէ միայն պատուհաս դարձան, այլ հայ մէլիքների մէջ պառակտում եւ ազգամիջեան կոիւնների դրդեցին:

-Այո՛, այդպէս է, գալով մրջիններին դու բարեհոգութեամբ ես վարուել նրանց հետ, բայց նրանք անգիտակ իրենց բնագոյով են ապրում: Ինչ է նշանակում վնասակար միջատին խղճալ, ինչպէս չի կարելի խղճալ մարդասպան թուրքին, տեսար եւ լսեցիր թէ ինչպէս Մեր այս ընթացիկ օրերին հայասպան Ռամիլ Սաֆարովին բանդից արտաջանձնեցին, պարզեւտրեցին եւ հերոսացրին, քանի որ նա հայ էր սպանել, նահատակ Գուրգէն Մարգարեանին քնած տեղում կացինահար էր արել: Հիմա քոնն է եղել, ո՛չ, այսպիսի մարդասպան թուրքերին չպիտի խղճալ եւ ոչ էլ՝ վնասակար միջատին կամ կենդանուն:

-Անվարան համաձայն եմ քո

տեսակէտների հետ, սակայն թոյլ տուր, որ ասեմ, մենք հայերս խղճմտանքով ժողովուրդ ենք, կարեւորութիւն ենք տալիս հոգեկան արժէքներին, ազգայինից վեր դասելով բարոյական եւ մարդասիրական արժէքները: Այս բոլոր տանջանքները, տառապանքները եւ կոտորածները մեր հայերիս նկատմամբ կատարուելով հանդերձ ու գում ենք թուրքերի հետ բարի դրացիական յարաբերութիւններ ունենալ, սակայն նրանք հայի ապրելը չեն ուզում տեսնել: Լաւ նկատել ես, թէ ինչպիսի վերաբերմունք ունեն, արդէն 20 տարի է Հայաստանն ու Արցախը շրջափակման են ենթարկել՝ ահաւոր կորուստների եւ վնասների պատճառ դառնալով: Նպատակ ունեն Հայաստանը տնտեսական ճգնաժամի ենթարկել, հայերին թուլացնել, մարդու ժից եւ կուրդ բազուկից գրկեն, գաղթեցնել եւ դադարկեն երկիրը: Երկրում որ աշխատանք չլինի, մարդիկ իրենց գոյապրուստի համար պէտք է ելք փնտրեն, այս պատճառով մեծ թւով հայեր են արտագաղթել:

-Թոյլ տուր հոգեկան եւ մարդասիրական արժէքների կապակցութեամբ ասեմ որ՝ իւրաքանչիւր քաղաքակիրթ-կուլտուրական մարդ, լինի հայ կամ օտար, այդպիսի հոգեբանութեամբ է ապրում, բայց ինձ համար անընդունելի է ազգի շահերը շրջանցել, ո՛չ, հաւատացած եմ՝ ով որ սիրում է իր ազգը, նաեւ յարգում է ուրիշինը: Ահա՛ մեր ազգի շահերը նկատի

«ԲԱԶ ՆԱԶԱՐ» 40-ԱՄԵԱԿԸ

Շարունակում է 8-էն

եանի «Բարի Տարեդարձ» երգը, յուզելով ներկայ հասարակութեանը:

Շնորհակալութեան եւ երախտագիտութեան խօսքեր ասաց Յովհաննէս Պալայեանը եւ յոյս յայտնեց որ ժողովրդի օգնութեամբ հնարաւորութիւն կ'ունենայ շարունակելու իր աշխատանքները, լրագրութեան ապարէզում, ինչպէս նաեւ Հայաստանի ծնողագուրկ երեխաների օգնութեան գործի մէջ: Յովհաննէս Պալայեանը յայտնեց որ Հոկտեմբեր 21ին տեղի կ'ունենայ օգնութեան ֆոնտի 13րդ թե-

լեթոնը: Իսկ սրահում ներկայ բարերար Գրիգոր Ալվազեանը տեղի վրայ ֆոնտին նուիրեց 10,000 տուրք: Ներկաները բուռն ծափերով ողջունեցին ծերունագարդ բարերարին:

Քաջ Նազարի 40 ամեակի առթիւ հրատարակուել էր գունագարդ մի գիրք, գունաւոր եւ ճաշակով, որտեղ տեղաւորուած էր Յ. Պալայեանի կենսագրականը համապատասխան նկարներով:

Յոբէլինական հանդէսն աւարտուեց երեկոյեան ժամի 9:00ին, հաղորդավար Նունէ Աւետիսեանի գնահատանքի ու շնորհակալութեան խօսքերով եւ բարեմաղթանքներով:

չառնելով է, որ այս օրին ենք մատնուած, դարձել ենք օտարամոլ, շարունակ օտարինը գերազանահատելով եւ գերադասելով, այս պատճառով էլ միշտ տուժել ենք եւ շահագործուել: Արցախեան գոյամարտը նոր ուղի բացեց հայութեան առջեւ ակն ընդ ական քաղաքականութիւն որդեգրելով, հայրենասիրութեան եւ ազգասիրութեան նոր շունչ ու ոգի բերեց, անհրաժեշտ է այդ ոգին արթուն պահել սերունդների կեանքում:

-Գալով մրջիններին ասեմ որ տնեցիների կողմից ահազանգեր հնչեցին, թէ՛ նրանք երեխեքին կծում են եւ ցաւերի պատճառ դառնում, նոյնիսկ բակը բարեկարգելու ընթացքում ինձ անգամներ խայթեցին: Էլ համբերելը անհնարին էր, նրանք ամէն տեղ տարածուել էին, բողոքի եւ անհանգստութեան ալիքներ էին բարձրանում նրանց դէմ, ուստի տարբեր միջոցներով պայքար գնաց նրանց դէմ, մտաւորապէս բակը մաքրուեց նրանցից, սակայն մէկ մասը գլուխ հանեց շէնքի ետեւի մատւմ, ուր եւս նրանց մաքրագործելու աշխատանքներ են տարւում, բայց նրանց դէմ մեր հալածանքները անպատասխան չէին մնում, որեւէ մի առիթով այդ իրենց պզտիկ տեղով իբր թէ իրենց ընկերների վրէժն էին լուծում, որն եղաւ իմ ոտքիս պարագան, որի պատճառով բժշկի դիմեցի, հարկ եղած դեղեր սրսկուեց, բժիշկը առաջարկեց սողա օգտագործել վերջ տալու մրջիններին:

-Դեհ, վրէժխնդրութիւն քիչ թէ շատ բոլոր արարածների մօտ

առկայ է նկատի առնելով նրանց կարողականութիւնը թէ՛ ուժի եւ թէ՛ բանականութեան: Օձերի պարզային վրէժխնդրութեան պարագաներ շատ են նկատուել, վայ թէ գոյգ օձերի ներկայութեամբ նրանցից մէկն ումէկը սպանուի եւ միւսը փախուստ տայ, նա սպանողի կերպարանքը պահում է իր յուշապատկերում առիթ փնտրելով գոյգի վրէժը լուծելու համար: Դրանով հանդերձ որ Ես վրիժառութեան հետ այնքան էլ համաձայն չեմ, որովհետեւ դա յաջողութեան հասնելու ելք չի, կոյր գործողութիւն է, թշնամանքը խորացնում է, սակայն կան այնպիսի պարագաներ, որոնք անխուսափելիօրէն ստիպում են մարդուս վրէժխնդրութեան դիմել, ինչպէս հայերիս ցեղասպանութեան պարագային դահիճները յաչս աշխարհի ազատ վայելում էին իրենց արիւնատու կեանքը: Պէտք էր որ նրանց վերջ տալ, ի լուր թուրքին հասկացնել, որ իսրաղ ու շինարար ժողովրդի դէմ ջարդն ու կոտորածը անպատասխան չի մնայ, ինչպէս էլ արեցին մեր նեմեգիսները թալիսթներին շանսատակ անելով իրենց հայրենիքից հեռու ծալուած օտար երկրներում: Մէկ ու կէս միլիոն հայերի կոտորածը եւ հայրենի հողերի բռնագրաւումը անմոռանալի կոտորածող ցաւեր են սերունդների մօտ, եթէ չգործադրուի արդարութիւնը եւ չվերականգնի հայ ժողովրդի իրաւունքները: Ողբերգութիւնը մեծ է, բայց ոչ մի չուսալքում, անսակարգ պահանջատիրութեան ճամբին յաջողութիւնը մերն է լինելու անկասկած:

VA Print Media
Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles
Նոր Գիրքերու Տպագրութեան եւ Հին Գիրքերու Նորոգութեան Համար Հեռ.աձայնել՝ ՎԱՀԷ ԱՁԱՊԱՀԵԱՆԻՆ
Vahe Atchabahian
1870 E. Layton St. • Pasadena, CA 91104
626-354-5924 • vamedia@yahoo.com

125

SOCIAL DEMOCRAT
HUNCHAKIAN PARTY
THROUGHOUT
HISTORY

ACADEMIC CONFERENCE

Dedicated to the
125th Anniversary of the
Social Democrat Hunchakian Party

PARTICIPANTS

- PROF. RICHARD HOVANNISIAN
- PROF. GERARD LIBARIDIAN
- PROF. KEVORK BARDAKJIAN
- PROF. ARA DOSTOURIAN
- PROF. ARA SANJIAN
- PROF. HRATCH TCHILINGIRIAN
- DR. GARABET MOUMDJIAN
- PROF. VAHRAM SHEMMASSIAN
- DR. VARTAN MATIOSSIAN
- REV. DR. ABEL MANOUKIAN
- MR. ARAM ARKUN

CO-SPONSORS

RICHARD HOVANNISIAN ENDOWED
CHAIR IN MODERN ARMENIAN
HISTORY AT UCLA
Los Angeles, CA

ARMENIAN RESEARCH CENTER AT THE
UNIVERSITY OF MICHIGAN
Dearborn, MI

WOODBURY UNIVERSITY
Burbank, CA

NATIONAL ASSOCIATION FOR ARMENIAN
STUDIES AND RESEARCH
Belmont, MA

ORGANIZED BY

ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION (A.E.B.U.)
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION (N.S.C.A.)

SATURDAY
OCTOBER 27, 2012

9:00am - 5:00pm

WOODBURY UNIVERSITY

7500 North Glenoaks Boulevard Burbank, CA

 LIVEWEBCAST

for more information please visit our website
or scan with your mobile device

www.sdhp125.org



Seating is limited. Reservation recommended.

email: info@sdhp125.org

1060 N. Allen Avenue, Pasadena, CA 91104 Tel.: 626.398.0506

FOLLOWING THE CONFERENCE **Dinner/Discussion with the Academics**
Donation: \$100/person